Անկախ հաշվետվական մեխանիզմ

Գործողությունների ծրագրի գնահատում. Հայաստան 2025-2027

Open Government Partnership

Independent Reporting Mechanism

Բովանդակություն

Բաժին I. Ընդհանուր նկարագիր	2
Բաժին II. Հեռանկարային հանձնառություններ	6
Բաժին III. Մեթոդաբանություն	35
Հավելված I. Հանձնառությունների վերաբերյալ տվյալներ	39
Հավելված II. Գործողությունների ծրագրի համատեղ մշակում	41

Պատասխանատվությունից հրաժարում. *սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար պատասխանատվությունը կրում է բացառապես Անկախ հաշվետվական մեխանիզմը (ԱՀՄ), և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության տեսակետները:*

Funded by the European Union

Open Government Partnership

Independent Reporting Mechanism

Բաժին I. Ընդհանուր նկարագիր

ԲԿԳ շրջանակներում Հայաստանի գործողությունների վեցերորդ ծրագիրը հիմնականում ուղղված է նախորդ փուլի հանձնառությունների առաջմղմանն ու կատարմանը, այդ թվում՝ մասնակցային կառավարման, էլեկտրոնային գնումների, տեղական մակարդակում հանրային մասնակցության և պաշտոնատար անձանց նվերների հայտարարագրերի թափանցիկության ապահովման ոլորտներում: Համատեղ մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը, նախորդ փուլերի հետ համեմատած, ավելի սահմանափակ էր, ինչը մեծապես պայմանավորված էր նոր հանձնառությունները՝ նախորդ բարեփոխումների շրջանակներում արձանագրված առաջընթացի վրա հիմնելու որոշմամբ: Ծրագրի իրականացման ընթացքում կարևոր կլինի ապահովել նոր համակարգերի լայն կիրառումը, հանրության շարունակական ներգրավվածությունը, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիական հասարակության համար անհրաժեշտ տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցությունը: Ծրագրի իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության հետ շարունակական երկխոսությունը կնպաստի ստանձնված հանձնառությունների կատարման համար հաշվետվողականության ամրապնդմանը:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Հայաստանի գործողությունների վեցերորդ ծրագիրը (2025–2027թթ.) ներառում է վեց հանձնառություն: Այն գլխավորապես հիմնված է Գործողությունների հինգերորդ ծրագրի (2022–2024թթ.) հանձնառությունների վրա: Հանձնառություններն ուղղված են կիբեռանվտանգության և բաց տվյալների ոլորտներում օրենսդրության կատարմանը, տեղական և ազգային մակարդակներում հանրային մասնակցության ամրապնդմանը, պաշտոնատար անձանց նվերների հաշվառման ռեեստրի մշակման գործընթացի ամփոփմանը կոռուպցիոն ռիսկերի ավտոմատացված վերլուծության գործիքների ներդրմամբ, իրական շահառուների վերաբերյալ տվյալների հետ փոխկապակցված էլեկտրոնային գնումների նոր համակարգի ստեղծմանը, ինչպես նաև դատական տվյալների թափանցիկության բարձրացմանը:

Կառավարությունը Գործողությունների ծրագիրն ընդունել է 2025 թվականի դեկտեմբերին:.[1] Բոլոր հանձնառությունները համահունչ են ազգային քաղաքականության շրջանակներին (մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրին և Հանրային կառավարման բարեփոխումների ռազմավարությանը), ինչպես նաև Կայուն զարգացման նպատակներին: Հանձնառություններից մի քանիսն անդրադառնում են ԱՀՄ-ի՝ Գործողությունների ծրագրի նախորդ շրջափուլի ընթացքում ներկայացված առաջարկություններին: Մի շարք հանձնառություններ ուղղված են նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) և Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի առաջարկությունների կատարմանը:

Ամփոփ տվյալներ

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2011թ. Միացել է ԲԿԳ-ին

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ

6/6 Համապատասխանում են բաց կառավարման շրջանակին

2/6 Նշանակալի արդյունքներ ապահովելու ներուժ

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Մասնակցային կառավարման բարելավում և ներդնում
- Էլեկտրոնային գնումների համակարգ՝ իրական շահառուների տվյալների ավտոմատացված փոխանցմամբ
- Տեղական մակարդակում հանրային մասնակցության ապահովման մեխանիզմներ
- Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստր և կոռուպցիոն ռիսկերի վերլուծության ավտոմատացված համակարգ

Համատեղ մշակման գործընթացում նվազագույն պահանջների կատարման ապահովում՝ Ոչ

Գործողությունների վեցերորդ ծրագրի համատեղ մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության ներգրավման հնարավորություններն ավելի սահմանափակ էին, քան նախորդ փուլերում: Դա հիմնականում պայմանավորված էր

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Կառավարության՝ քաղաքացիական հասարակության կողմից ընդունված առաջարկությամբ՝ շարունակելու նախորդ ծրագրով նախատեսված բարեփոխումները և 2026 թվականի հունիսին նախատեսված խորհրդարանական ընտրություններից առաջ ձեռնպահ մնալու նոր նախաձեռնություններ առաջադրելուց: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը հիմնականում ընդունել են այս հիմնավորումը և կարծում են, որ գործողությունների ծրագիրն ընդհանուր առմամբ արտացոլում է պետական կառավարման ոլորտի ներկայիս առաջնահերթությունները:[2] Կառավարությունը նշել է նաև, որ 2025–2027 թվականների գործողությունների ծրագրում ներառված հանձնառությունների մեծ մասն ի սկզբանե առաջարկվել է ՔՀԿ-ների կողմից՝ նախորդ ծրագրի մշակման ընթացքում, ուստի քաղաքացիական հասարակությունը կարևոր դերակատարություն ունի ոչ միայն այդ հանձնառությունների ձևավորման, այլև դրանց հետագա մշակման և իրականացման գործում:

2024 թվականին Վարչապետի աշխատակազմում ստեղծված Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը, վարչապետի աշխատակազմի ղեկավարի վերահսկողությամբ, ստանձնել է ԲԿԳ գործընթացների համակարգման հիմնական գործառույթը: 2020 թվականից ի վեր բազմաշահառու աշխատանքային խումբը գործել է ոչ ֆորմալ հիմունքներով՝ առանց դրա կազմը սահմանող վարչապետի որոշման: Աշխատանքային խմբի աշխատանքներին կարող են մասնակցել պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այն ներկայացուցիչները, որոնք հետաքրքրված են ԲԿԳ գործընթացներին մասնակցությամբ: Ավելի վաղ փուլերում ներգրավված ՔՀԿ-ների մեծ մասը շարունակել է իր մասնակցությունը խմբում: 2025 թվականին ԲԿԳ աշխատանքային խումբն ընդլայնված կազմով գումարել է ընդամենը մեկ նիստ: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերն ընդգծել են աշխատանքային խմբի նիստերն ավելի հաճախ անցկացնելու, ինչպես նաև Գործողությունների ծրագրի թե՛ մշակման, թե՛ իրականացման փուլերում դրա շուրջ առավել ինտենսիվ հաղորդակցության ու քննարկումների անհրաժեշտությունը:[3]

ԱՀՄ-ն որպես հեռանկարային է գնահատել չորս հանձնառություն, որոնք, ըստ Կառավարության, քաղաքացիական հասարակության և միջազգային գործընկերների, վերաբերում են Հայաստանի բաց կառավարման օրակարգի երկարամյա առաջնահերթություններին: Երկրորդ հանձնառության շրջանակում Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը նպատակ ունի բարելավել մասնակցային կառավարումը՝ մեթոդաբանությունների մշակման և պետական կառավարման համակարգում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման միջոցով: Թեև այս հանձնառությունն արդեն իսկ ունի հանրային մասնակցության ապահովման հետևողականությունը բարելավելու ներուժ, այնուամենայնիվ դրա արդյունավետությունը կարելի է բարձրացնել՝ ներդնելով հստակ չափանիշներ կամ խրախուսման մեխանիզմներ, որոնք կխթանեն դրա իրականացումը: Երրորդ հանձնառության շրջանակում Ֆինանսների նախարարությունը կներդնի էլեկտրոնային գնումների միասնական հարթակ, որը կապահովի տվյալների ինքնաշխատ հրապարակումը և իրական շահառուների ռեգիստրի հետ ինտեգրումը: Այս հարթակը կարող է էապես բարձրացնել գնումների թափանցիկությունը, հնարավորություն ընձեռել իրական ժամանակում վերահսկելու գնումների գործընթացները և նվազեցնել պետական գնումների վերաբերյալ տեղեկությունների չհրապարակման ռիսկերը: Չորրորդ հանձնառության շրջանակում Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը նախատեսում է ինստիտուցիոնալացնել մասնակցային բյուջետավորումը և տեղական մակարդակում ներդնել քաղաքացիների մասնակցության

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

լրացուցիչ մեխանիզմներ, այդ թվում՝ մշտադիտարկման և հետադարձ կապի գործիքներ: Այս հանձնառության կատարումը կարող է մեծացնել քաղաքացիների ազդեցությունը տեղական մակարդակում որոշումների կայացման վրա: Հինգերորդ հանձնառության շրջանակներում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նախատեսում է ստեղծել նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստր և ներդնել կոռուպցիոն ռիսկերի վերլուծության ավտոմատացված գործիքներ: Լիարժեք գործելու դեպքում նվերների հաշվառման ռեեստրն ու ավտոմատացված գործիքները կարող են նպաստել խախտումների և անհամապատասխանությունների հայտնաբերման արդյունավետության բարձրացմանը:

Ինչպես նախորդ ծրագրերի դեպքում էր, գործողությունների վեցերորդ ծրագիրը հիմնականում ուղղված է թվային հարթակների և ընթացակարգային մեխանիզմների մշակմանը, մինչդեռ հաշվետվողականությանը, պատշաճ կիրարկմանն ու վարքագծային փոփոխությանն անմիջականորեն ուղղված գործողությունները բավարար չափով արտացոլված չեն: Օրինակ՝ տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության ոլորտներում օրենսդրության կիրարկման ապահովման (Հանձնառություն 1) և «e-Court-statistics» վիճակագրական հարթակի (Հանձնառություն 6) վերաբերյալ հանձնառությունները հիմնականում տեխնիկական և նախապատրաստական բնույթ ունեն, իսկ դրանց ազդեցությունը կախված կլինի ավելի լայն բարեփոխումներից և գործնական իրականացումից: Բացի դրանից, կարևոր կլինի ապահովել բարեփոխումների կայունության համար անհրաժեշտ երկարաժամկետ ինստիտուցիոնալ հիմքերը, հատկապես երբ այդ բարեփոխումները տեղական մակարդակում պիլոտային նախաձեռնություններ են ներառում կամ իրականացվում են արտաքին աջակցությամբ: Պետական կառավարման համակարգում կարողությունների սահմանափակ լինելը նույնպես կարող է նվազեցնել գործողությունների ծրագրի ազդեցությունը: Միևնույն ժամանակ, գործողությունների ծրագրի առավելություններից են նախորդ բարեփոխումների շարունակականության ապահովումը և միջազգային չափանիշներին համապատասխանությունը, մասնավորապես՝ գնումների պայմանագրերի բաց համակարգի և մասնակցային կառավարման ոլորտներում: Գործողությունների ծրագրի երկամյա փուլից հետո Կառավարության համար կարևոր կլինի ապահովել նոր համակարգերի լայն կիրառումը, հանրության շարունակական մասնակցությունը, ինչպես նաև պաշտոնատար անձանց և քաղաքացիական հասարակության համար անհրաժեշտ տեխնիկական և ինստիտուցիոնալ աջակցությունը: Ծրագրի իրականացման ընթացքում քաղաքացիական հասարակության հետ հետևողական և բաց երկխոսությունը կարող է նպաստել հանձնառությունների ազդեցության մեծացմանը:

---

[1]ՀՀ կառավարության որոշում ««Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Հանրապետության 2025-2027 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին», թիվ 1903-Լ, 18 դեկտեմբերի 2025թ. , ARLIS, https://www.arlis.am/hy/acts/218429/latest :

[2]Արփինե Հակոբյան («ՀԿ կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 24 մարտի 2026թ., Սոնա Այվազյան («Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 5 փետրվարի 2026թ., Գայանե Նալբանդյան (Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) GmbH), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 13 մարտի 2026թ.:

[3]Լիանա Դոյդոյան («Ինֆորմացիայի ազատության կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 20 մարտի 2026թ., Գրիշա Խաչատրյան («Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 8 ապրիլի 2026թ., Սոնա Այվազյան, ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Բաժին II. Հեռանկարային հանձնառություններ

Հետևյալ գնահատման մեջ դիտարկվում է այն չորս հանձնառությունը, որն ԱՀՄ-ն առանձնացրել է որպես առավել հեռանկարային արդյունքներին միտված ներուժ ունեցող հանձնառություններ: Հեռանկարային հանձնառություններն անդրադառնում են քաղաքականության այնպիսի ոլորտի, որը կարևոր է շահագրգիռ կողմերի համար կամ ազգային համատեքստում: Դրանք պետք է լինեն ստուգելի, համապատասխանեն բաց կառավարման շրջանակին և ապահովեն արդյունքներին միտված չափավոր կամ զգալի ներուժ: Սույն գնահատման մեջ վերլուծվում են նաև մարտահրավերները, հնարավորությունները և առաջարկությունները՝ սույն Գործողությունների ծրագրի շրջանակներում փորձի ձեռքբերման և իրականացման գործընթացին նպաստելու համար:

Աղյուսակ 1. Հեռանկարային հանձնառություններ

Հանձնառություն 2-ը նպատակ ունի կատարելագործել մասնակցային կառավարման մեխանիզմները՝ պետական կառավարման համակարգում մեթոդաբանությունների մշակման և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման միջոցով:
Հանձնառություն 3-ը նախատեսում է ներդնել էլեկտրոնային գնումների միասնական հարթակ, որը կապահովի տվյալների ինքնաշխատ հրապարակումը և իրական շահառուների ռեգիստրի հետ ինտեգրումը:
Հանձնառություն 4-ը նպատակ ունի ինստիտուցիոնալացնել մասնակցային բյուջետավորումը և տեղական մակարդակում ներդնել քաղաքացիների ներգրավման լրացուցիչ մեխանիզմներ, այդ թվում՝ մշտադիտարկման և հետադարձ կապի գործիքներ:
Հանձնառություն 5-ը նախատեսում է ստեղծել նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստր և ներդնել կոռուպցիոն ռիսկերի վերլուծության ավտոմատացված գործիքներ:

Հանձնառություն 2. Մասնակցային կառավարման կատարելագործում և ներդնում

Պատասխանատու մարմին՝ Վարչապետի աշխատակազմ
Ամբողջական նկարագրի համար տե՛ս Գործողությունների ծրագրի Հանձնառություն 2-ը:

Համատեքստ և նպատակներ

Այս հանձնառությունը հիմնվում է Վարչապետի աշխատակազմում 2024 թվականի դեկտեմբերին Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծման վրա, որը Գործողությունների հինգերորդ ծրագրի արդյունքն է: ԲԿԳ նախորդ գործողությունների ծրագրերի և կառավարման բարեփոխումների շրջանակներում ներդրվել էին մասնակցային գործիքները և հարթակները, ինչպես օրինակ՝ նախարարություններին կից հասարակական խորհուրդները, e-petitions հանրագրերի հարթակը, e-draft.am հարթակը և ըստ անհրաժեշտության ձևավորվող աշխատանքային խմբերը: Սակայն ՏՀՁԿ-ի 2024 թվականի գնահատման համաձայն՝ Հայաստանում մասնակցային քաղաքականության մշակումը շարունակում էր մնալ մասնատված և պետական կառավարման մարմինների գործունեության մեջ ոչ բավարար չափով ինտեգրացված, ինչը սահմանափակում էր այդ գործիքների արդյունավետությունը:[1]

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Բացի այդ, Հայաստանի Հանրային կառավարման բարեփոխումների 2023–2030 թվականների ռազմավարությունը մատնանշել էր մասնակցության համար առավել ամուր ինստիտուցիոնալ շրջանակների անհրաժեշտությունը և ԲԿԳ նախաձեռնությունը նշել էր որպես այդ նպատակին հասնելու համար կենսունակ հարթակ: Քաղաքացիական հասարակության և կառավարության ներկայացուցիչները, ինչպես նաև անկախ ուսումնասիրությունները նշում են, որ մասնակցությունը հաճախ անհետևողական է, հետադարձ կապը՝ սահմանափակ, իսկ որոշումների կայացման գործընթացներում դրա ներառումը՝ թույլ: Շատ դեպքերում մասնակցային գործելակերպերը պայմանավորված են եղել նախարարությունների և պետական գերատեսչությունների առանձին նախաձեռնություններով, այլ ոչ թե կառույցի ստանձնած պարտավորությամբ, իսկ որոշ պետական մարմիններ մասնակցությունն ընկալում են որպես ձևական պահանջ, ոչ թե քաղաքականության առավել արդյունավետ մշակման գործիք: [2] Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչության ստեղծումը կարևոր ինստիտուցիոնալ քայլ էր այս բացերը վերացնելու ուղղությամբ: Ի թիվս այլ գործառույթների՝ այս Վարչությունը ներկայումս պատասխանատու է մասնակցային կառավարման մեխանիզմների մշակման, մասնակցային գործընթացների մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև ՔՀԿ-ների զարգացման ու առաջխաղացման հետ կապված հարցերի լուծման համար:[3]

Այս հանձնառության շրջանակում Վարչությունը կմշակի մասնակցային գործընթացների մեթոդաբանական ուղեցույց, կստեղծի քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի տվյալների շտեմարաններ՝ խորհրդակցություններին ներգրավելու նպատակով, կբարելավի մասնակցության թվային գործիքները, ինչպես օրինակ՝ e-draft.am հարթակը և կզարգացնի ազգային ու տեղական մակարդակներում պաշտոնատար անձանց ինստիտուցիոնալ կարողությունները:[4]

Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

Այս հանձնառությունը հաջող կատարման դեպքում կարող է նպաստել պետական կառույցներում մասնակցային գործելակերպերի հետևողական կիրառմանը և դրանց որակի բարձրացմանը: Մեթոդաբանական ուղեցույցը ու կարողությունների զարգացման ծրագրերը կարող են նպաստել որոշումների կայացման գործընթացներում շահագրգիռ կողմերի և հանրության առավել համակարգված ներգրավմանը: Օրինակ՝ Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը նախատեսում է ռազմավարական պլանավորման փաստաթղթերի մշակման ուղեցույցում ներդնել բաց կառավարման սկզբունքների (թափանցիկության, հանրային մասնակցության, հաշվետվողականության և բարեվարքության սկզբունքների պահպանման պահանջը) ինտեգրմանն ուղղված մեթոդաբանություն:[5] Հանձնառությունը կարող է ավելի բաց և թափանցիկ դարձնել նաև քաղաքականության մշակման գործընթացները: Օրինակ՝ ռազմավարական կառավարման ուղեցույցը (ընդունվել է 2026 թվականի ապրիլին) ներառում է հանրային քննարկման ներկայացվող ռազմավարությունների նախագծերի բովանդակության և ձևաչափի վերաբերյալ պահանջներ: Այդ ուղեցույցը սահմանում է նաև ռազմավարությունների իրականացման վերաբերյալ պարբերական հաշվետվությունների ներկայացման պահանջ և ռազմավարություններում բաց կառավարման սկզբունքների ներառում (չափորոշիչներից մեկը թափանցիկությունն է): Ավելին ՔՀԿ-ները հնարավորություն կունենան գրանցվելու e-draft.am հարթակում: Կոնկրետ թեմատիկ ոլորտներում գործող ՔՀԿ-ների՝ գրանցման այս ֆունկցիոնալի միջոցով ստեղծված տվյալների շտեմարանները կարող են օգնել պետական գերատեսչություններին

քննարկումներ նախաձեռնելիս կամ քաղաքականության մշակման հարցում ներգրավվածություն ապահովելիս ներգրավել ավելի մեծ թվով ՔՀԿ-ների:[6]

Թեև հանձնառությունը կարևոր հիմքեր է ստեղծում ինստիտուցիոնալացման համար, այնուամենայնիվ դրա վերջնական ազդեցությունը կախված կլինի շարունակական քաղաքական աջակցությունից, պահանջների կատարումից և պետական կառավարման համակարգում մշակութային փոփոխություններից: Հանձնառությունը չի նախատեսում պետական կառույցներում մեթոդաբանական ուղեցույցի միասնական իրականացում ապահովող պարտադիր պահանջներ կամ խրախուսման մեխանիզմներ: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը նշել են, որ առանց ուղեցույցի պատշաճ կատարման, մասնակցության նոր մեխանիզմները կարող են վերածվել ձևականության՝ հաշվի առնելով բազմաթիվ պաշտոնատար անձանց շրջանում մասնակցության արժեքի սահմանափակ գիտակցումը և կադրերի մեծ հոսունությունը: Այս պատճառներով ԱՀՄ-ն արդյունքներին միտված ներուժը գնահատում է չափավոր:

Կատարման ընթացքում հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկություններ

Այս հանձնառության հաջողության համար անհրաժեշտ կլինեն պետական կառույցների կողմից մասնակցային գործընթացների կազմակերպման հստակ չափանիշներ ու խրախուսման մեխանիզմներ, ինչպես նաև այդ գործընթացների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:[7] Վարչապետի աշխատակազմի ներկայացուցչի խոսքերով՝ այնպիսի համատեքստային գործոններ, ինչպիսիք են պետական մարմիններում կադրերի մեծ հոսունությունը և 2026 թվականի հունիսին կայացած ընտրությունների շրջանում Կառավարության առաջնահերթությունների փոփոխությունը, կարող են դանդաղեցնել կատարումը:[8] Մյուս հիմնական մարտահրավերներից են սահմանափակ վարչական կարողությունները, մարմինների միջև պահանջների ոչ հավասարաչափ պահպանումը և նոր գործիքների լայն ներդնումն ապահովելու անհրաժեշտությունը: Բացի այդ, սահմանափակ իրազեկման դեպքում մասնակցությունը կարող է սահմանափակվել այն շահագրգիռ կողմերով, որոնք արդեն իսկ ակտիվորեն ներգրավված են քաղաքականության մշակման գործընթացներում:

Այս մարտահրավերները հասցեագրելու և կատարումն ամրապնդելու նպատակով ԱՀՄ-ն առաջարկում է իրականացնել հետևյալ քայլերը.

- **Քաղաքականության մշակման բոլոր փուլերում հանրային մասնակցության պարտադիր, պետական կառավարման ամբողջ համակարգում գործող չափանիշների ընդունում:** Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է ապահովել արդեն իսկ մշակված մասնակցային գործընթացի միասնական ուղեցույցի և մեթոդաբանությունների կատարումը Կառավարության որոշման միջոցով, ինչը կնպաստի առավել լայն ներդրմանը: Պետական կառավարման ամբողջ համակարգի համար միասնական շրջանակը կարող է օգնել ստանդարտացնել քննարկումների գործելակերպերը և հստակեցնել պետական մարմինների պարտականությունները ենթաօրենսդրական ակտերով, որոնք հստակ կսահմանեն՝ երբ, ինչպես և որ փուլերում պետք է իրականացվի մասնակցությունը, այդ թվում՝ վաղ փուլերում ներգրավվածության պահանջները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մասնակցության սկզբունքը լայնորեն կիրառելու համար անհրաժեշտ են հստակ կանոններ: Օրինակ՝ «Պետական կառավարման համակարգում որոշումների կայացման թափանցիկության մասին» Ռումինիայի օրենքի (7-րդ հոդվածի 9-րդ

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

մաս) համաձայն՝ պետական մարմինը պարտավոր է որոշում ընդունել նորմատիվ ակտի նախագծի հանրային քննարկման համար հանդիպում կազմակերպելու վերաբերյալ, եթե օրենքով սահմանված կարգով ստեղծված ասոցիացիան կամ մեկ այլ պետական մարմին գրավոր դիմում է ներկայացնում:[9] Լատվիայում յուրաքանչյուր նոր նախագծի համար պետական կառույցները նշանակում են հանրային մասնակցության հնարավորությունների ապահովման համար պատասխանատու անձ, ով պետք է ներգրավի հասարակության թիրախային խմբերին՝ ընտրելով հանրային մասնակցության առավել համապատասխան ձևը՝ գործընթացում արդյունավետ, բաց, ներառական և ժամանակին հանրային ներգրավվածություն ապահովելու համար:[10]

- **Քննարկումների ընթացքում հետադարձ կապի ու թափանցիկության բարելավում:** Հանրային վստահությունն ու մասնակցությունն ամրապնդելու նպատակով Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է ներդնել մեխանիզմներ, որոնք ավելի թափանցիկ կդարձնեն, թե ինչպես են շահագրգիռ կողմերի ներկայացրած առաջարկություններն ազդել մասնակցային կառավարմանը վերաբերող մեթոդաբանությունների վերաբերյալ քաղաքականության որոշումների վրա: E-draft.am հարթակի արդիականացման ընթացքում Վարչապետի աշխատակազմը և Արդարադատության նախարարությունը կարող են բարելավել հարթակի օգտագործելիությունը, դրա ինտեգրումն անցանց գործընթացներին և ապահովել թափանցիկություն այն հարցում, թե շահագրգիռ կողմերի արձագանքներն ինչպես են ազդել դիտարկվող օրենսդրության վրա: E-draft.am հարթակի կատարելագործումը, անհրաժեշտության դեպքում ամրագրված Կառավարության լրացուցիչ կարգավորումներով, կարող է ապահովել, որ պետական կառույցները հրապարակեն առերես անցկացրած քննարկումների և դրանց ամփոփաթերթերի վերաբերյալ տեղեկությունները, յուրաքանչյուր գերատեսչության կողմից ստացված և ընդունված առաջարկությունների վիճակագրությունը, հանրային արձագանքի հիման վրա փոփոխությունների նշումով քաղաքականության փաստաթղթերի լրամշակված նախագծերը, ինչպես նաև տեղեկությունների հրապարակման նոր ձևաչափերը (օրինակ՝ ինֆոգրաֆիկաներ)՝ հասանելիությունը բարելավելու համար: Օրինակ՝ Բրազիլիայի մասնակցության հարթակը մեկտեղում է մասնակցության հնարավորությունների, այդ թվում՝ հանրային լսումների ու համաժողովների, թվային խորհրդակցությունների, խորհուրդների ու հանձնաժողովների վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները:[11] Մոլդովայի Հանրապետության հարթակը ներկայացնում է որոշում կայացնողների կողմից ստացված և ընդունված մեկնաբանությունների վիճակագրությունը:[12] Իտալիայի հարթակը նույնպես մեկտեղում է ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում հանրային քննարկումների վերաբերյալ տեղեկություններն ու հնարավորությունները և հրապարակում համապատասխան թարմ տեղեկություններ:[13]
- **Մասնակցային գործընթացների նկատմամբ վերահսկողության ամրապնդում:** Այն երկրները, որոնք հաջողությամբ ներդնում են մասնակցության սկզբունքները, հաճախ համատեղում են ուղեցույցի կիրառումը վերահսկողության և արդյունավետության գնահատման հետ: Հայաստանում Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է համագործակցել քաղաքացիական հասարակության և անկախ փորձագետների հետ՝ ուղեցույցի պահանջների պահպանումը վերահսկելու, մասնակցային

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

գործելակերպերի վերաբերյալ տվյալներ հավաքելու և տարբեր մարմինների կատարողականի արդյունքները հրապարակայնորեն ներկայացնելու համար:

- **Կարողությունների զարգացման և մասնակցային գործելակերպերի մասնագիտական կատարելագործման ուղղությամբ ներդրումների կատարում:** Պետական ծառայողների համար վերապատրաստման ծրագրերն ու մասնագիտական փորձի փոխանակման համայնքները կարող են օգնել ինստիտուցիոնալացնել մասնակցային կառավարումը, ինչպես նաև պետական կառավարման համակարգում խթանել քաղաքացիների ներգրավման մշակույթը: Թեև հանձնառությունն արդեն նախատեսում է կարողությունների զարգացման գործողություններ, այնուամենայնիվ Վարչապետի աշխատակազմը կարող է համագործակցել նաև Քաղաքացիական ծառայության գրասենյակի հետ՝ հանրային մասնակցության թեման քաղաքացիական ծառայողների քննություններում և վերապատրաստման ծրագրերում ներառելու համար: Սա կարող է բարելավել ազդեցությունն ու կայունությունը՝ հաշվի առնելով կադրերի մեծ հոսունությունը: Այն երկրները, որոնց հաջողվում է հանրային մասնակցությունը լայնորեն ներդնել պետական կառավարման գործընթացներում, հիմնական ուղղորդումը համադրում են կառուցակարգված համակարգման և գործընկերային ուսուցման հետ: Օրինակ՝ Ֆինլանդիայում գործում են քաղաքացիական ծառայողների և շահագրգիռ կողմերի բազմամակարդակ ցանցեր (այդ թվում՝ Քաղաքացիական ծառայողների ցանց և Մունիցիպալիտետների տեղական ժողովրդավարության ցանց), որոնք ներգրավված են երկրի ԲԿԳ գործընթացին, տրամադրում են ուղղորդում և ապահովում գործընկերային ուսուցում: [14] Նույն կերպ Կանադայում գործում է պետական կառավարման ամբողջ համակարգը ընդգրկող՝ Հանրային ներգրավման մասնագիտական համայնքը, որը փոխանակում է լավագույն գործելակերպերը և աջակցում քաղաքացիական ծառայության համակարգում մասնակցային մոտեցումների մասնագիտական կատարելագործմանը:[15]
- **Մասնակցության փոխկապակցում խրախուսման մեխանիզմների և կատարողականի գնահատման հետ:** Դիմադրությունը հաղթահարելու համար Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է մասնակցության ցուցանիշները ներառել կատարողականի գնահատման մեջ կամ քաղաքացիական ծառայողների գնահատումներում՝ խրախուսելով արդյունավետ իրականացումը, այլ ոչ թե պարզապես պահանջների ձևական պահպանումը:
- **Մասնակցության նոր գործիքների, ուղեցույցի և մեխանիզմների նախագծման, իրականացման ու մշտադիտարկման գործընթացներում քաղաքացիական հասարակության դերակատարների ներգրավում:** Կարևոր է, որ նոր գործիքների ընտրությունն ու կառուցվածքը համապատասխանեն համատեքստին և քաղաքացիների ու ՔՀԿ-ների կարիքներին, որպեսզի դրանք արդյունավետ կիրառվեն նպատակներին հասնելու համար: Հետևաբար քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը պետք է գործընթացի սկզբից և դրա ամբողջ ընթացքում ներգրավվեն գործիքների ընտրության ու մշակման մեջ՝ նրանց աջակցությունն ապահովելու և վստահությունն ու ներգրավվածությունը խթանելու համար: Բացի դրանից, Կառավարությունը կարող է խրախուսել քաղաքացիական հասարակության կողմից՝ ընդունված ուղեցույցի և գործիքների իրականացման մշտադիտարկումը և

մշտադիտարկման արդյունքների հիման վրա վարել շարունակական երկխոսություն՝ դրանց կատարելագործման ու բարելավման նպատակով:

Այս հանձնառության շրջանակներից դուրս Հայաստանում մասնակցության համար ավելի առավել բարենպաստ միջավայր ձևավորելու նպատակով Կառավարությունը կարող է դիտարկել ԱՀՄ-ի հետևյալ առաջարկությունները.

- **Որոշումների կայացման վաղ փուլերում մասնակցության ինստիտուցիոնալացում:** Մասնակցությունը պետք է սկսվի քաղաքականության մշակման շրջափուլի ամենավաղ փուլերում, այլ ոչ թե սահմանափակվի օրենսդրական նախագծերի վերաբերյալ մեկնաբանություններ ներկայացնելով՝ ընդգրկելով նաև քաղաքականության գաղափարների սկզբնական ձևակերպումը: Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է հենվել առկա գործիքների ու գործելակերպերի վրա (օրինակ՝ հասարակական խորհուրդներ, համատեղ աշխատանքային խմբեր)՝ մասնակցային մեխանիզմները ինստիտուցիոնալ և օրենսդրական շրջանակների ամբողջ շրջափուլում ներառելու համար: Շվեդիայի «Sakråd» մոդելը Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև կառուցակարգված, վաղ փուլում իրականացվող երկխոսության օգտակար օրինակ է, որը նպաստում է որոշումների կայացմանը և քաղաքականությունների փոխհամաձայնեցվածության բարելավմանը:[16] Բացի դրանից, Եվրոպայի խորհրդի «Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն գործելակերպի կանոնագիրքը» ուղղորդում է տրամադրում քաղաքականության մշակման ամբողջ շրջափուլի, այդ թվում՝ յուրաքանչյուր փուլում կիրառվող պարտականությունների և գործիքների վերաբերյալ:[17]
- **Մասնակցային գործընթացներում իրազեկման աշխատանքների ու ներառականության ընդլայնում:** Թեև թվային գործիքները կարող են բարձրացնել մասնակցության հասանելիությունն ու մասշտաբը, այնուամենայնիվ դրանք պետք է լրացնեն առերես մասնակցության և խորհրդակցական մեխանիզմները՝ թվային գործիքներին սահմանափակ հասանելիություն կամ հմտություններ ունեցող խմբերի բացառումից խուսափելու համար: Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է իրականացնել տարբեր խմբերի կարիքներին համապատասխան իրազեկման աշխատանքներ և աջակցել կարողությունների զարգացմանը, հատկապես Երևանից դուրս, որպեսզի ավելի շատ ՔՀԿ-ներ ներգրավվեն քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներում:
- **Նորարարության խրախուսումը և խորհրդակցական մոդելների փորձարկումը:** Մասնակցային և բաց կառավարման հարցերի վարչությունը կարող է փորձարկել և ուղեցույցում ներառել նորարարական գործիքներ ու մեխանիզմներ, ինչպես օրինակ՝ քաղաքացիների ասամբլեաները, հանրային բանավեճերը կամ քաղաքականության լաբորատորիաները: Դա կարող է ամրապնդել ներգրավվածությունը և ցույց տալ մասնակցության արժեքը: Շատ երկրներ քաղաքականության բարդ հարցերը լուծելու նպատակով կիրառել են քաղաքացիների ասամբլեաները կամ խորհրդակցական այլ մեթոդներ, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը:[18] «Open Gov Guide» ուղեցույցը տրամադրում է մասնակցության սկզբունքների համընդհանուր կիրառման վերաբերյալ նյութեր և մասնակցության տարբեր նորարարական մոդելների գաղափարներ:[19]

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Հանձնառություն 3. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. Ինքնաշխատ եղանակով իրական շահառուների տվյալների փոխանցում

Պատասխանատու մարմին՝ Ֆինանսների նախարարություն
Ամբողջական նկարագրի համար տե՛ս Գործողությունների ծրագրի Հանձնառություն 3-ը:

Համատեքստ և նպատակներ

Այս հանձնառությունը նպատակ ունի ներդնել էլեկտրոնային գնումների միասնական հարթակ և ապահովել դրա փոխգործելիությունն իրական շահառուների ռեգիստրի հետ: Ներկայումս Հայաստանում գնումների վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել մի քանի համակարգերում: Դրանցից մեկը 2011 թվականին գործարկված armeps.am[20] համակարգն է , որը նախատեսված է գնումների մրցույթների, գնային առաջարկների ներկայացման և մեկ աղբյուրից գնումներ կատարելու ընթացակարգերի առցանց կազմակերպման համար:[21] Armeps.am համակարգի «Գնումների պլանների և պայմանագրերի կառավարում» մոդուլում հրապարակվում են գնումների պլանները, պայմանագրերը և դրանց առնչվող փաստաթղթերը: Բոլոր տվյալները հնարավոր է որոնել ըստ պայմանագրի տեսակի և առարկայի, կապալառուի, մատակարարի ու ժամանակահատվածի, ինչպես նաև ներբեռնել CSV և Excel ձևաչափերով:[22] Procurement.am[23] հարթակը ծառայում է որպես գնումների հրավերների և պայմանագրերի մասին ծանուցումների տեղեկագիր: Այն տրամադրում է մրցույթի մասնակիցների իրական շահառուների հայտարարագրերը:[24] Գործում է նաև առանձին eauction.armeps.am[25] համակարգը , որի միջոցով մատակարարները կարող են մասնակցել էլեկտրոնային աճուրդներին:[26]

Հայաստանն այս հարթակներով արդեն հրապարակում է գնումների վերաբերյալ մեծածավալ տեղեկություններ: Սակայն տեղեկությունները հաճախ մասնատված են, թերի կամ հրապարակվում են ոչ մեքենայաընթեռնելի ձևաչափերով, օրինակ՝ սկանավորված PDF ֆայլերով:[27] Սա լրագրողներից և ՔՀԿ-ներից մեծ ժամանակ և ռեսուրսներ է պահանջում գնումների ծախսերը մշտադիտարկելու և հնարավոր կոռուպցիոն ռիսկերը հայտնաբերելու նպատակով տվյալները վերլուծելու համար: Բացի դրանից, գնումների որոշ գործընթացներ շարունակում են իրականացվել թղթային եղանակով կամ հետևողականորեն չեն ներբեռնվում գործող հարթակներ, հատկապես՝ տեղական ինքնակառավարման մակարդակում:

Այս հանձնառությունը հիմնվում է նախորդ Գործողությունների ծրագրի հանձնառություններից մեկի վրա և համահունչ է պետական կառավարման թվայնացման ու ֆիսկալ թափանցիկության բարձրացման ուղղությամբ Կառավարության առավել լայն ջանքերին: Դրանով հաշվի են առնվում նաև միջազգային գնահատումներում, այդ թվում՝ ՏՀՀԿ-ի հակակոռուպցիոն մոնիթորինգի զեկույցներում բարձրացված խնդիրները՝ կապված գնումների գործընթացների նկատմամբ սահմանափակ վերահսկողության, ոչ ամբողջական թվայնացման և տվյալների ցածր հասանելիության հետ:[28] Նախորդ Գործողությունների ծրագրի ընթացքում մշակվել էր էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական առաջադրանքը (ՏԱ), որը, Կառավարության ներկայացուցիչների խոսքերով, ներառում էր Բաց պայմանագրերի տվյալների ստանդարտը (ԲՊՏՍ): Էլեկտրոնային գնումների համակարգի նախագծման և գործարկման համար անցկացվել էր երկփուլ մրցույթ, և նախնական որակավորում անցած մասնակիցներին թույլատրվել էր շարունակել մասնակցությունը մրցութային

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

գործընթացին: Ֆինանսների նախարարությունն ընտրել էր հաղթող մասնակցին և 2026 թվականի փետրվարին պայմանագիր ստորագրել նոր համակարգի մշակման, թեստավորման, գործարկման և տեխնիկական սպասարկման համար: 2025 թվականի հոկտեմբերին Կառավարությունն էլեկտրոնային գնումների վերաբերյալ իր որոշման մեջ կատարել էր փոփոխություններ՝ բոլոր համայնքներից պահանջելով գնումներն իրականացնել էլեկտրոնային եղանակով (ի լրումն պետական կառավարման մարմինների և պետական մասնակցությամբ կազմակերպությունների մեծ մասի), քանի որ ժամանակակից համակարգ ունենալու անհրաժեշտությունն առավել քան հրատապ է:[29]

Հանձնառությունը նպաստում է թափանցիկության բարձրացմանը՝ հնարավորություն տալով հասանելի դարձնել գնումների պայմանագրերի և պայմանագրերի կնքումից հետո կազմվող փաստաթղթերի վերաբերյալ համապարփակ մեքենայաընթեռնելի տվյալները, ինչն էլ ավելի է դյուրացնում գնումների վերաբերյալ որոշումների և պայմանագրերի կատարման մշտադիտարկումն ու հանրային վերահսկողությունը:

Արդյունքներին միտված ներուժ՝ զգալի

Ամբողջությամբ կատարվելու դեպքում էլեկտրոնային գնումների նոր համակարգը կարող է էապես բարելավել գնումների տվյալների հասանելիությունը, որակը և օգտագործելիությունը՝ գնումների ամբողջ շրջափուլի՝ մրցույթի հայտարարումից մինչև պայմանագրի կատարումը, բոլոր փուլերի վերաբերյալ տեղեկությունները հրապարակելով մեքենայաընթեռնելի և փոխգործելի ձևաչափերով: Հանձնառությունն ուղղված է ԱՀՄ-ի 2022–2024 թվականների գործողությունների ծրագրի գնահատմամբ ներկայացված մի շարք առաջարկությունների իրականացմանը, այդ թվում՝ ԲՊՏՍ-ի ներդրմանը և օգտատերերի կողմից կոնկրետ պայմանագրերի կամ դրանց կողմերի վերաբերյալ արձանագրման հնարավորության ապահովմանը: Օգտագործման համար հարմար հարթակը կարող է խրախուսել քաղաքացիական հասարակությանն ու լրատվամիջոցներին մշտադիտարկել գնումների գործընթացները՝ բարելավելով հանրային վերահսկողությունը: Գնումների տվյալների փոխկապակցումն այլ տվյալների խմբերի, օրինակ՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հետ, կարող է բարձրացնել թափանցիկությունը և նպաստել շահերի բախման իրավիճակների ու գնումների գործընթացում բարեվարքության հետ կապված ռիսկերի առավել արդյունավետ հայտնաբերմանը: Կառավարության 2024 թվականի որոշումը, որը հավատարմագրված ՔՀԿ-ներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին թույլ է տալիս վերահսկել պետական գնումների պայմանագրերի կատարումը, նույնպես կարող է աջակցել այս ջանքերին:[30] Այն կարող է խրախուսել էլեկտրոնային գնումների հարթակի ավելի լայն օգտագործումը՝ միաժամանակ նպաստելով պետական գնումների ոլորտում քաղաքացիական հասարակության փորձագիտական կարողությունների զարգացմանը:

Ակնկալվում է, որ նոր հարթակը կավտոմատացնի այն գործընթացները, որոնք ներկայումս իրականացվում են ձեռքով, այդ թվում՝ գնումների պայմանագրերի և ուղեկցող փաստաթղթերի հրապարակումը: Ֆինանսների նախարարության համաձայն՝ ավտոմատացումը կնվազեցնի գնումների մասնագետների վարչական ծանրաբեռնվածությունը, կբարելավի տվյալների հրապարակման ճշգրտությունն ու ժամանակին իրականացումը (բացառելով բացթողումների կամ բացերի ցանկացած հնարավորություն) և հնարավորություն կտա իրական ժամանակում հետևել պայմանագրերի կառավարմանը:[31] Ավելին, հարթակի գործարկումից հետո Կառավարությունը նախատեսում է էլեկտրոնային գնումները պարտադիր դարձնել բոլոր պետական մարմինների, այդ թվում՝ պետական և համայնքային ձեռնարկությունների

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

համար, ինչը զգալիորեն կբարձրացնի պետական միջոցների հաշվին կատարվող բոլոր գնումների ոլորտում թափանցիկությունը:[32] Որոշման մեջ բոլոր համայնքների ներառումը կարևոր է, քանի որ այն նրանց պարտավորեցնում է գնումները կատարել էլեկտրոնային եղանակով՝ ապահովելով տեղական մակարդակում գնումների գործընթացի առավել բարձր թափանցիկություն և հաշվետվողականություն: Նոր հարթակը կնպաստի այս պահանջի լիարժեք իրականացմանն ու մշտադիտարկմանը:

Հանձնառության հնարավոր ազդեցությունը կամրապնդվի կոռուպցիայի դեմ պայքարի ընթացիկ բարեփոխումներով: «Գնումների մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն ներդնել կոռուպցիոն ռիսկերի դեմ լրացուցիչ երաշխիքներ՝ սահմանափակելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքների հետ փոխկապակցված ընկերությունների մասնակցությունը պետական մրցույթներին:[33] Օրենքն ընդունվելուց հետո էլեկտրոնային գնումների հարթակը կլինի օրենքի պահանջների կատարումը ստուգելու հիմնական գործիքներից մեկը: ՔՀԿ-ները, լրագրողները և հետազոտողները կկարողանան համադրել հայտատուների տեղեկությունները Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի տվյալների շտեմարանների հետ՝ պարզելու համար, թե արդյոք որևէ փոխկապակցված անձ մրցույթներին մասնակցում է որպես մասնակից, թե հաղթող ընկերության ղեկավար, թե իրական շահառու:

Էլեկտրոնային գնումների լիարժեք անցումը և գնումների ամբողջ շրջափուլն ընդգրկող ավտոմատացված ու համապարփակ տվյալների հասանելիությունը թափանցիկության առումով կլինեն զգալի առաջընթաց և կնվազեցնեն տեղեկությունների չբացահայտման հնարավորությունները: Այնուամենայնիվ ազդեցությունը կախված կլինի պահանջների արդյունավետ կատարումից, տվյալները վերլուծելու և դրանց հիման վրա գործելու ինստիտուցիոնալ կարողություններից, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու վերահսկող մարմինների կողմից հարթակի օգտագործումից: Առավել մեծ խնդիրները, ինչպիսիք են հովանավորչությունը, մրցակցության մանիպուլյացիաները, ոչ մրցակցային ընթացակարգերի լայն կիրառումը և գնումների հետ կապված խախտումների նկատմամբ պատասխանատվության միջոցների սահմանափակ կիրառումը, հավանաբար անհրաժեշտ կլինի լուծել համակարգի ներդնումից հետո:[34]

Կատարման ընթացքում հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկություններ

Գնումների գործընթացի թափանցիկության բարելավումը կախված կլինի պահանջների կատարման արդյունավետ մեխանիզմներից, հանրային վերահսկողության առավել արդյունավետ գործելակերպերից և հարթակն օգտագործելու բավարար կարողություններից: Հարթակը քաղաքացիական հասարակության, լրագրողների և այլ շահագրգիռ կողմերի կողմից արդյունավետ վերահսկողության համար պետք է ունենա օգտատիրոջ համար հարմար կառուցվածք, ընդ որում պետք է ձեռնարկվեն նպատակային ջանքեր՝ ոչ պետական դերակատարների վերլուծական կարողություններն ամրապնդելու համար:

Կատարման ընթացքում կարող են առաջանալ գործնական և ինստիտուցիոնալ մարտահրավերներ: Էլեկտրոնային գնումների համակարգին լիարժեք անցումն ապահովելու համար պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների պակասը կարող է խաթարել հանձնառության ամբողջական կատարումը: Բացի դրանից, իրական շահառուների տվյալների ինտեգրման հնարավորությունները կարող են սահմանափակ լինել պետական

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

մրցույթներին մասնակցող ոչ ռեզիդենտ ընկերությունների դեպքում: Քանի որ Հայաստանի իրական շահառուների ռեգիստրն այս պահին փոխգործելի չէ օտարերկրյա ռեգիստրների հետ, համակարգը կարող է հիմնվել օտարերկրյա մասնակիցների կողմից ինքնուրույն ներկայացվող տվյալների վրա: Դա կարող է հանգեցնել սեփականության վերաբերյալ թերի կամ չստուգվող տեղեկությունների և սահմանափակել շահերի բախման իրավիճակները բացահայտելու հնարավորությունները:

Կատարումն ամրապնդելու նպատակով ԱՀՄ-ն Ֆինանսների նախարարությանն առաջարկում է հետևյալը.

- **Առաջնահերթություն տալ օգտատիրոջ համար հարմար կառուցվածքին և որոնման ընդլայնված ֆունկցիոնալին**, այդ թվում՝ ըստ մատակարարի, պատվիրատուի, ժամանակահատվածի և գնումների առարկայի՝ ճկուն զտիչներին ու որոնման հնարավորություններին: Բացատրական նյութերը, տեսողական ուղեցույցները և հանրության համար նախատեսված տեղեկատվական վահանակները կնպաստեն համակարգի առավել լայն կիրառմանը: Օրինակ՝ Ֆինլանդիան հանրության օգտագործման համար հրապարակում է գնումների համապարփակ տվյալներ՝ օգտատիրոջ համար հարմար վահանակներով և պարզ որոնման ու զտման ֆունկցիոնալներով,[35] մինչդեռ Միացյալ Թագավորությունը մշակում է հանրության համար նախատեսված տեղեկատվական վահանակներ, որոնց միջոցով հնարավոր կլինի հետևել գնումների հետ կապված ռիսկերին և պայմանագրերի կատարմանը:[36]
- **Ամրապնդել իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հավաստիության ստուգման մեխանիզմները**, այդ թվում՝ տվյալների փոխանակման հարցում միջազգային համագործակցության միջոցով՝ ոչ ռեզիդենտ ընկերությունների տվյալները ստուգելու նպատակով: Դա կօգնի նվազեցնել իրական շահառուների ոչ ճշգրիտ հայտարարագրերի հետ կապված ռիսկերը և բարելավել շահերի բախման իրավիճակների հայտնաբերումը:
- **Քաղաքացիական հասարակության և լրագրողների համար կազմակերպել պարբերական վերապատրաստումներ և տրամադրել տեխնիկական ուղղորդում՝ գնումների տվյալների վերլուծության և պայմանագրերի կատարման գործընթացի մշտադիտարկման վերաբերյալ:** Դա կարելի է իրականացնել համապատասխան փորձառություն ունեցող միջազգային կազմակերպությունների և ՔՀԿ-ների հետ համագործակցությամբ: Մի շարք երկրներ բաց տվյալները համադրել են վերահսկող կազմակերպությունների հետ վերապատրաստման ու համագործակցության հետ: Օրինակ՝ Ինդոնեզիան ՔՀԿ-ների հետ համատեղ մշակել է գնումների առցանց մշտադիտարկման գործիք և վերապատրաստել լրագրողներին ու աուդիտորներին՝ գնումների տվյալների օգտագործման միջոցով կոռուպցիոն ռիսկերը վերհանելու համար:[37]
- **Գնումների մասնագետների համար ապահովել շարունակական վերապատրաստում և տեխնիկական աջակցություն**, հատկապես տեղական ինքնակառավարման մարմիններում և պետական ձեռնարկություններում՝ նոր համակարգի հետևողական և արդյունավետ կիրառումն ապահովելու համար:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

- **Ապահովել հարթակի միջոցով հանրության կողմից ներկայացված հաղորդումներին ժամանակին արձագանքումը**, որպեսզի օգտատերերի հաղորդած խախտումները կամ խնդիրները հասցեագրվեն:
- **Պարբերաբար ուսումնասիրել և գնահատել հարթակը**՝ պարզելու համար, թե արդյոք այն ծառայում է սահմանված նպատակներին, և բացերի վերհանման դեպքում կատարելագործել այն: Ֆինանսների նախարարությունը կարող է մշտադիտարկել նաև արդյունքները գնումների տվյալների հիման վրա, օրինակ՝ մեկ աղբյուրից կատարվող գնումները, կամ արդյոք պայմանագրերը շնորհվում են շուկայի նոր մասնակիցներին, թե մատակարարների ու մասնակիցների արդեն իսկ գոյություն ունեցող խմբերը շարունակում են զբաղեցնել գերիշխող դիրք:

Հանձնառություն 4. Տեղական մակարդակում հանրային մասնակցության մեխանիզմներ

Պատասխանատու մարմին՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
Ամբողջական նկարագրի համար տե՛ս Գործողությունների ծրագրի Հանձնառություն 4-ը:

Համատեքստ և նպատակներ

Նախորդ Գործողությունների ծրագրի շրջանակներում Հայաստանը համայնքների մեծ մասում ներդրել է մասնակցային բյուջետավորման գործելակերպը, և պետական բյուջեից ֆինանսական միջոցներ է հատկացրել տեղական մակարդակում մասնակցային բյուջետավորման ծրագրերի իրականացման համար: Այս հանձնառության նպատակն է շարունակել մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալացումը՝ համապատասխան դրույթներ ներառելով «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքներում: Այն նախատեսում է նաև ներդնել քաղաքացիների ներգրավվածության նոր գործիքներ, այդ թվում՝ մասնակցային բյուջետավորման գործընթացների հանրային մշտադիտարկում, հետադարձ կապի կատարելագործված մեխանիզմներ և համայնքային ծառայությունների նախագծման համար համատեղ մշակման մեթոդաբանությունների փորձարկում: Ինչպես տեղական կառավարմանն առնչվող ԲԿԳ նախորդ հանձնառությունների դեպքում, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ, ԳՄՀԸ) Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ աջակցում է մի շարք գործողությունների կատարմանը,[38] իսկ ծառայությունների գնահատման թվային գործիքների մշակումն իրականացվում է Սերբիայի կառավարության ֆինանսավորմամբ իրականացվող ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) նախագծի շրջանակներում:[39] Այս հանձնառության արդյունքների մեծ մասը կինտեգրվի Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգին:[40]

Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինները սովորաբար հանրային մասնակցությունը դիտարկում են որպես ընթացակարգային պահանջ, այլ ոչ թե քաղաքացիների իրական ներգրավման միջոց: Հանրային լսումները հաճախ կրում են ձևական բնույթ, իսկ մասնակցությունը մեծապես կախված է համայնքների ղեկավարների հայեցողությունից և կարողություններից, ինչպես նաև տեղական ՔՀԿ-ների ռեսուրսներից ու ներգրավվածությունից:[41] Դրա հետևանքով քաղաքացիների ներգրավվածությունը ցածր է, պետական մարմինները բավարար հետադարձ կապ չեն ապահովում հանրության ներկայացրած առաջարկությունների վերաբերյալ, տեղական

ծառայությունները չեն արձագանքում քաղաքացիների կարիքներին, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վստահությունը ցածր է:

Այս հանձնառությամբ հասցեագրվող՝ բաց կառավարման հիմնական արժեքը քաղաքացիական մասնակցությունն է, որը փոխլրացվում է հանրային հաշվետվողականությամբ՝ մշտադիտարկման և հետադարձ կապի մեխանիզմների միջոցով, ինչպես նաև թափանցիկության բաղադրիչներով՝ մշտադիտարկման, հաշվետվությունների ներկայացման և գնահատման արդյունքների հրապարակման միջոցով:

Արդյունքներին միտված ներուժ՝ զգալի

Հայաստանի համայնքների մեծ մասում արդեն կիրառվում է նախորդ Գործողությունների ծրագրով ներդրված մասնակցային բյուջետավորումը՝ հիմնականում Կառավարության հատկացրած ֆինանսավորման, ինչպես նաև միջազգային և քաղաքացիական հասարակության գործընկերների իրազեկվածության բարձրացման ու մեթոդաբանական աջակցության շնորհիվ: Սակայն այդ գործընթացը շարունակում է կամավոր բնույթ կրել և ամբողջությամբ ինստիտուցիոնալացված չէ: Մասնակցային բյուջետավորման գործընթացում քաղաքացիների ներգրավվածությունը սովորաբար ավարտվում է նախագծի ընտրության փուլում, իսկ հետագա հետևողական աշխատանքը, մշտադիտարկումն ու հաշվետվողականությունը սահմանափակ են:[42] Բացի դրանից, քաղաքացիների կարծիքը ներկայացնելու, համայնքային ծառայությունների նախագծմանը մասնակցելու և տեղական ծառայությունների մատուցման ընթացքում ի հայտ եկող խնդիրների մասին հաղորդելու համար նախատեսված գործիքները բավարար չափով չեն օգտագործվում, ինչի արդյունքում մատուցվող ծառայությունները պատշաճ կերպով չեն արձագանքում հանրային կարիքներին:

Առաջին գործողությունից այս հանձնառությունը նախատեսում է մասնակցային բյուջետավորումը ներառել տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր գործառույթների շարքում, ինչպես նաև վեց համայնքում փորձարկել մասնակցային բյուջետավորման հանրային մշտադիտարկումը: Մինչև Գործողությունների ծրագրի ընդունումը Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (ՏԿԵՆ) «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի փոփոխությունների նախագծում ներառել էր մասնակցային բյուջետավորումն ամրագրող դրույթներ:[43] GIZ-ի աջակցությամբ, ՏԿԵՆ-ի և «Արմավիրի զարգացման կենտրոն» ՔՀԿ-ի համագործակցությամբ մշակվում է մասնակցային բյուջետավորման հանրային մշտադիտարկման մեթոդաբանություն, որը փորձարկվելու է վեց համայնքում՝ ներառելով քաղաքացիներից մշտադիտարկողներ ընտրելու և վերապատրաստելու գործընթացը (որպես Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ իրականացվող «Լավ կառավարում՝ տեղական զարգացման համար Հարավային Կովկասում» (ԼԿՏՋ) ծրագրի շրջանակում: Իրականացման համար պատասխանատու կազմակերպություններն ընդգծում են, որ մասնակցային բյուջետավորման գործընթացում հանրային մշտադիտարկման նպատակը հանրության իրազեկվածության բարձրացումը, ծրագրերի ընտրության փուլից բացի ներգրավվածության ընդլայնումը և գործընթացի նկատմամբ վստահության ամրապնդումն է, այլ ոչ թե ֆորմալ վերահսկողության կամ հսկողության մեխանիզմի ստեղծումը:[44] 2026 թվականի սկզբին (Գործողությունների ծրագրի իրականացման ժամանակահատվածում) համայնքների տեղեկատվական համակարգերի տեխնիկական սպասարկման համար պատասխանատու Տեղեկատվական համակարգերի զարգացման և ուսուցման կենտրոնը (ՏՀՋՈՒԿ), Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

աջակցությամբ, պիլոտային համայնքների կայքերում ներդրել է մշտադիտարկման բաժիններ, որոնք հնարավորություն են տալիս մշտադիտարկողներին էլեկտրոնային եղանակով մուտքագրել տեղեկություններ, իսկ հանրությանը՝ տեսնել ստուգաթերթերի հիման վրա իրականացված մշտադիտարկման արդյունքները:

Երկրորդ գործողության շրջանակներում 2025 թվականի սեպտեմբերից ի վեր (մինչև Գործողությունների ծրագրի պաշտոնական ընդունումը) բոլոր համայնքներում գործում է «Տեսել եմ» բջջային հավելվածը: Այն հնարավորություն է տալիս օգտվել համայնքների կայքերում առկա՝ խնդիրների մասին հաղորդելու ֆունկցիոնալից՝ ընդլայնելով դրա կիրառման շրջանակը: Մինչ հավելվածի ստեղծումը քաղաքացիները կարող էին խնդիրների մասին հայտնել համայնքապետարանին ուղարկված նամակով կամ էլեկտրոնային փոստով, ինչպես նաև կայքի «Հայտնել խնդրի մասին» հատուկ բաժնի միջոցով: Շահագրգիռ կողմերի կարծիքով՝ կայքի այդ ֆունկցիոնալը քիչ էր օգտագործվում, մինչդեռ բջջային հավելվածը խնդիրների մասին հաղորդելու ավելի մատչելի միջոց է:[45] Տեղական ինքնակառավարման մարմինների անձնակազմը հաղորդումը ստանում է համակարգի միջոցով, խնդիրն ուսումնասիրելուց հետո պատասխանում է հաղորդումն ուղարկած քաղաքացիներին և, հնարավորության դեպքում, լուծում այն: Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում ՏԿԵՆ-ը կշարունակի հետևել հավելվածի օգտագործմանը և համայնքների կողմից տրամադրված հետադարձ կապին:

Երրորդ գործողության շրջանակներում Գործողությունների ծրագիրը նախատեսում է վեց պիլոտային համայնքում քաղաքացիակենտրոն ծառայությունների համանախագծում, որպեսզի ծառայությունների նախագծումը համապատասխանի քաղաքացիների կարիքներին ու ակնկալիքներին: Պիլոտային փուլում համանախագծված ծառայությունների ներդրմանն աջակցում է GIZ-ը Գերմանիայի և Շվեյցարիայի կառավարությունների ֆինանսավորմամբ: Այս փորձառությունը կօգնի զարգացնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքային ծառայությունների նախագծման և մատուցման գործընթացում մասնակցային մոտեցումներ կիրառելու կարողությունները: Պիլոտային ծրագրերի փորձը մյուս համայնքներին կփոխանցվի փորձի փոխանակումների և քաղաքացիակենտրոն ծառայությունների նախագծման մեթոդաբանական գործիքակազմի միջոցով:[46]

Վերջապես, չորրորդ գործողության շրջանակներում նախատեսվում է համայնքային ծառայությունների հարցումների փորձարկում համայնքների կայքերում հատուկ բաժնի միջոցով, որոնց օգնությամբ քաղաքացիները կկարողանան մանրամասն գնահատել ծառայությունների որակը: Այս գործողությունն իրականացվում է ՄԱՀԾ-ի կողմից՝ ՏԿԵՆ-ի և ՏՀՀՈՒԿ-ի համագործակցությամբ: Ներկայումս համայնքային ծառայությունների վերաբերյալ քաղաքացիների կարծիքները համակարգված ձևով չեն հավաքագրվում: Հարցումների տվյալները տեղական ինքնակառավարման մարմիններին կտրամադրեն նրանց աշխատանքի առանձին ուղղությունների որակի վերաբերյալ համախմբված տեղեկություններ: Գնահատման հարցերը համատեղ մշակում են համայնքի բնակիչներն ու տեղական ինքնակառավարման մարմինները, ինչը հնարավորություն է տալիս ներառել յուրաքանչյուր համայնքի համար կարևոր չափորոշիչները՝ արդյունքները հետագայում ծառայությունների բարելավման գործընթացներում օգտագործելու նպատակով:[47]

Այս քայլերի կայունությունն ու խորությունը դեռ անորոշ են: Օրենսդրական փոփոխությունը իրավական հիմք կստեղծի բոլոր համայնքներում մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալացման համար՝ ՏԿԵՆ-ի մասնակցային

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

բյուջետավորման ընթացակարգի վերաբերյալ ուղեցույցին համապատասխանող միասնական գործընթացով:[48] Սակայն հանձնառության մյուս գործողությունները պիլոտային են, որոնք կախված են արտաքին աջակցությունից, առանց երկարաժամկետ ինստիտուցիոնալացման կամ ֆինանսավորման հստակ ծրագրերի: Հանրային մշտադիտարկողները ներկայումս աշխատում են կամավոր հիմունքներով և չունեն պայմանագրային հարաբերություններ կամ տեղական ինքնակառավարման մարմինների ֆորմալ պարտավորություններ: Շահագրգիռ կողմերը նախատեսում են հանրային մշտադիտարկման ուղեցույցը դարձնել մասնակցային բյուջետավորման գործող ընթացակարգի բաղադրիչ,[49] որը համայնքները պարտավոր են հետևել, եթե որոշեն պետական համաֆինանսավորմամբ իրականացնել մասնակցային բյուջետավորման գործընթաց:[50] Այնուամենայնիվ, եթե չապահովվեն կարողությունների պատշաճ զարգացում, ապա ընտրության թափանցիկ ու անկախ գործընթացներ և կամավոր մշտադիտարկման խմբերի խրախուսման միջոցներ, ապա կա ռիսկ, որ մշտադիտարկման մեխանիզմները չեն պահպանվի կամ կգործեն միայն ձևականորեն: Նույն կերպ, ծառայությունների գնահատման և համանախագծման նախաձեռնությունների շարունակությունն ու ընդլայնումը կախված կլինեն այն բանից, թե արդյոք համայնքները կստանձնեն դրանց իրականացման պատասխանատվությունն ու համապատասխան միջոցներ կհատկացնեն:[51] Բացի դրանից, հանձնառությունը ոչ միայն չի երաշխավորում, որ Կառավարությունը հատուկ հարթակով ներկայացված հաղորդումների հիման վրա կձեռնարկի միջոցներ, այլև անգործության համար չի նախատեսում պատասխանատվության միջոցներ:

Հաշվի առնելով օրենսդրական փոփոխությունների միջոցով մասնակցային բյուջետավորման ինստիտուցիոնալացումը՝ ԱՀՄ-ն հանձնառության արդյունքներին միտված ներուժը գնահատում է զգալի: Այնուամենայնիվ հանձնառության մյուս գործողությունների դեպքում արդյունավետ և կայուն ազդեցության ապահովումը կախված կլինի նրանից, թե որքանով կընդլայնվեն և կինստիտուցիոնալացվեն պիլոտային նախաձեռնությունները, և որքան արդյունավետ դրանք կներդրվեն տեղական գործելակերպերում:

Կատարման ընթացքում հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկություններ

Եթե բոլոր գործողությունները կատարվեն և ինստիտուցիոնալացվեն, ապա այս հանձնառությունը կարող է տեղական մակարդակում բարելավել թափանցիկությունը, արձագանքման կարողությունը և քաղաքացիների ներգրավվածությունը: Ակնկալվող արդյունքներն են մասնակցության թվային գործիքների առավել լայն կիրառումը, քաղաքացիների և համայնքապետարանների միջև հետադարձ կապի բարելավումը և աստիճանական մշակութային փոփոխությունը դեպի առավել մասնակցային կառավարում: Այնուամենայնիվ փոխակերպող արդյունքների հասնելու համար անհրաժեշտ կլինի ունենալ իրավական ավելի ամուր հիմքեր՝ լրացուցիչ կարգավորումների միջոցով, որոնք կհենվեն մշտադիտարկման և ծառայությունների գնահատման պիլոտային նախաձեռնությունների վրա, ինչպես նաև նպատակային ռեսուրսներ (հատկապես իրազեկման և կարողությունների զարգացման համար) և հաշվետվողականության ավելի հստակ մեխանիզմներ, որոնք քաղաքացիների առաջարկները կկապակցեն որոշումների կայացման հետ: Մի շարք բաղադրիչներ իրականացվում են դոնորների նախաձեռնությամբ՝ առանց երկարաժամկետ ֆինանսավորման կամ ինստիտուցիոնալ պատասխանատվության հստակ մեխանիզմների: Եթե մշտադիտարկումը ներառվի մասնակցային բյուջետավորման

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

ուղեցույցում, ապա Կառավարությունը պետք է ձեռնարկի միջոցներ, որպեսզի ցածր մասնակցությունը, սահմանափակ կարողությունները և մշտադիտարկողների ընտրության գործընթացում հնարավոր կողմնակալությունը չազդեն արդյունքների վրա: Հանրային մշտադիտարկման արժանահավատության պահպանումը կարևոր կլինի նաև այն դեպքում, երբ համայնքապետարանները վերահսկեն մշտադիտարկողների ընտրության գործընթացը, կամ եթե տեղական դինամիկան խոչընդոտի քննադատական մոտեցմամբ ներգրավվածությունը: Բացի դրանից, «Տեսել եմ» հավելվածի նման թվային գործիքները պետք է զարգացվեն՝ ապահովելով դրանց լայն ներդնումը և դարձնելով հեշտ հասանելի, անանուն օգտագործման համար և ապահովելով, որ հետադարձ կապը հանգեցնի տեսանելի փոփոխությունների: Պիլոտային ծառայությունների համանախագծման և գնահատման մեխանիզմները նույնպես հետագա փուլերում պետք է ինստիտուցիոնալացվեն, ապահովվեն միջոցներով և ակտիվորեն օգտագործվեն քաղաքացիների կողմից:

Բարեփոխման հաջողությունն ի վերջո կախված կլինի պիլոտային փուլերից հետո շարունակական ներգրավվածությունից և այն բանից, թե որքանով քաղաքացիների ներդրումը կհանգեցնի քաղաքականության կամ ծառայությունների տեսանելի բարելավման: Կատարման գործընթացն ու հավակնոտությունն ամրապնդելու համար ԱՀՄ-ն առաջարկում է հետևյալը:

- **ՏԿԵՆ-ը կարող է ինստիտուցիոնալացնել և բավարար ռեսուրսներով ապահովել մասնակցային մեխանիզմները**՝ սահմանելով համապատասխան կարգավորող դրույթներ և խրախուսելով համայնքներին առանձին բյուջեներ հատկացնել կարողությունների զարգացման ու իրազեկվածության բարձրացման համար: ՏԿԵՆ-ը կարող է նախաձեռնել օրենսդրությամբ այնպիսի դրույթների ամրագրումը, որոնք կսահմանեն օժանդակ գործողությունների և մշտադիտարկման պահանջների կատարման համար նվազագույն բյուջետային հատկացումներ, ինչը, իրազեկման աշխատանքների և կարողությունների զարգացման համար պետական կամ տեղական բյուջեներով նախատեսված նպատակային ֆինանսավորմանը զուգահեռ, կամրապնդի կայունությունը:
- **ՏԿԵՆ-ը, տեղական ինքնակառավարման մարմինները և միջազգային ու տեղական գործընկեր կազմակերպությունները կարող են ապահովել հանրային մշտադիտարկման անկախությունն ու արժանահավատությունը**՝ ընտրության թափանցիկ ընթացակարգերով, գործառույթների և երաշխիքների վերաբերյալ հստակ ուղեցույցով: Բավարար կարողություններ և հետևողական ներգրավվածություն ապահովելու համար կարելի է խրախուսել ՔՀԿ ներկայացուցիչների, փորձառու մասնագետների և համայնքում հեղինակություն վայելող առաջնորդների ներգրավվածությունը մշտադիտարկման խմբերին: Կողմնակալության ռիսկերը նվազեցնելու նպատակով Հայաստանը կարող է դիտարկել, օրինակ՝ Մեխիկոյի քաղաքացիական դիտորդական խմբերի մոդելը, որտեղ քաղաքացիական հասարակությունը ֆորմալ դերակատարություն ունի մշտադիտարկողների ընտրության կամ մշտադիտարկման գործընթացների համատեղ կառավարման հարցում:[52]
- **ՏԿԵՆ-ը, տեղական ինքնակառավարման մարմինները և միջազգային ու տեղական գործընկեր կազմակերպությունները կարող են ներդրումներ կատարել ներառական իրազեկման աշխատանքներում և դիվերսիֆիկացնել մասնակցության ուղիները**՝ թիրախային արշավներով և

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

ՔՀԿ-ների ցանցերով՝ մասնակցությունն ընդլայնելու և «Տեսել եմ» հավելվածի և ծառայությունների գնահատման հարթակների օգտագործումն ավելացնելու նպատակով: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մասնակցությունն աճում է, երբ Կառավարությունները թվային գործիքները համատեղում են թիրախային, անցանց ներգրավվածության հետ: Օրինակ՝ «Decide Madrid» հարթակի աշխատանքը փոխլրացվում է ակտիվ իրազեկման արշավներով և համայնքային մակարդակով կազմակերպվող ներգրավվածության միջոցառումներով:[53] Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են կիրառել նման մոտեցումներ՝ համագործակցելով ՔՀԿ-ների, դպրոցների և համայնքային խմբերի հետ, կազմակերպելով համայնքի բնակիչների հետ հանդիպումներ, խորհրդակցական աշխատաժողովներ և արտագնա հանդիպումներ՝ քիչ ներկայացված խմբերը ներգրավելու համար: ԱՀՄ-ն առաջարկում է նաև դպրոցական մասնակցային բյուջետավորումը դարձնել համընդհանուր գործելակերպ՝ աշակերտների և երիտասարդների շրջանում վաղ տարիքից մասնակցության մշակույթ սերմանելու նպատակով: Օրինակ՝ Ուկրաինայի մի շարք համայնքներ միջազգային ու տեղական ՔՀԿ-ների աջակցությամբ, այդ թվում՝ ԲԿԳ տեղական գործողությունների ծրագրերի միջոցով, դպրոցներում իրականացնում են մասնակցային բյուջետավորում:[54] Հիմնվելով այս փորձի վրա՝ Հայաստանի «ՀԿ կենտրոն» ՔՀԿ-ն մշակել է Կրթության, գիտության, երիտասարդության և սպորտի նախարարության կողմից հաստատված՝ դպրոցական մասնակցային բյուջետավորման ծրագիր, որը կարող է հիմք ծառայել Կառավարության կողմից նախաձեռնության ինստիտուցիոնալացման համար:[55]

- **ՏԿԵՆ-ը և տեղական ինքնակառավարման մարմինները կարող են ապահովել հետադարձ կապի ամբողջական գործընթացը՝** երաշխավորելով, որ հարթակների միջոցով ստացված քաղաքացիների կարծիքները համակարգված կերպով ուսումնասիրվեն, պատասխանվեն և արտացոլվեն համայնքային որոշումներում: ԲԿԳ բարեփոխումների հաջողության առանցքային գործոններից մեկը պետական մարմինների՝ սահմանված ժամկետներում քաղաքացիների առաջարկներին արձագանքելու պարտավորությունն է: ՏԿԵՆ-ը կարող է սահմանել «Տեսել եմ» հավելվածով բարձրացված խնդիրներին արձագանքելու և ծառայությունների գնահատման արդյունքներով իրականացված հետագա քայլերը հրապարակելու հստակ չափանիշներ ՝ առաջարկելով, որ համայնքները դրանք ընդունեն տեղական կարգավորումներով: Հանրային տեղեկատվական վահանակները, որոնք ցույց կտան, թե ինչպես են քաղաքացիների առաջարկներն ազդել որոշումների վրա, լրացուցիչ կամրապնդեն հաշվետվողականությունը:
- **ՏԿԵՆ-ը, տեղական ինքնակառավարման մարմինները և միջազգային ու տեղական գործընկեր կազմակերպությունները կարող են նախագծել օգտագործման համար հարմար, խրախուսման մեխանիզմներով թվային գործիքներ՝** ապահովելով հասանելիություն և անանուն կարծիք հայտնելու տարբերակներ: Դրանք կարելի է ինտեգրել այլ հարթակներին, ինչպես օրինակ՝ ծառայությունների գնահատման ֆունկցիոնալ ունեցող բջջային հավելվածին: Դա հնարավոր է իրականացնել դոնոր կազմակերպությունների աջակցությամբ: Միաժամանակ համայնքները պետք է ավելի հստակ ցույց տան շոշափելի արդյունքները (օրինակ՝ լուծված խնդիրներ և բարելավված ծառայություններ)՝ օգտատերերի ներգրավվածությունը պահպանելու և համայնքներում մասնակցության մշակույթը խթանելու համար:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

- **ՏԿԵՆ-ը Վարչապետի աշխատակազմի, ինչպես նաև միջազգային ու տեղական գործընկեր կազմակերպությունների հետ կարող է ստեղծել աշխատանքային խումբ կամ ընդլայնել գործող խումբը՝ ավելի շատ տեղական քաղաքացիական հասարակության դերակատարներ ներգրավելու համար:** Խումբը կարող է համատեղ մշակել իրազեկման ու մշտադիտարկման բարելավման գաղափարներ, սահմանել մշտադիտարկման և գնահատման չափանիշներ, փոխանակել լավագույն գործելակերպերը և ապահովել տեղական դերակատարների աջակցությունը:

Հանձնառություն 5. Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի և կոռուպցիոն ռիսկերի վերլուծության ավտոմատ համակարգ

Պատասխանատու մարմին՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
Ամբողջական նկարագրի համար տե՛ս Գործողությունների ծրագրի Հանձնառություն 5-ը:

Համատեքստ և նպատակներ

Այս հանձնառության նպատակն է ստեղծել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ստացած նվերների հաշվառման թվային ռեեստր և ներդնել հայտարարագրերի ու կուսակցությունների հաշվետվությունների համար տվյալների ավտոմատացված վերլուծության գործիքներ: Հանձնառությունը հիմնվում է Հայաստանում վերջերս իրականացված բարեփոխումների վրա, որոնք ուղղված են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների ստացած նվերների կարգավորմանը և բարեվարքության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների ամրապնդմանը: Նախորդ Գործողությունների ծրագրի շրջանակում Հայաստանն ընդունել է օրենսդրական կարգավորումներ՝ նվերներ ընդունելու սահմանափակումները հստակեցնելու, պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ կապված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման ընթացակարգեր սահմանելու, ինչպես նաև նվերների վերաբերյալ կանոնների խախտման համար վարչական պատասխանատվություն նախատեսելու նպատակով:[56] 60 000 ՀՀ դրամը (մոտ 150 ԱՄՆ դոլարը) գերազանցող արժեք ունեցող նվերները փոխանցվում են Պետական գույքի կառավարման կոմիտեին (իսկ տեղական պաշտոնատար անձանց դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմնին) և դառնում պետական (կամ համայնքային) սեփականություն: Արգելված նվերները նույնպես պետք է փոխանցվեն պետությանը, եթե սահմանված ժամկետում հնարավոր չէ դրանք վերադարձնել կամ վճարել դրանց համարժեք փոխհատուցում: Նախորդ Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) մշակել է նվերների հայտարարագրման ձևանմուշ և ուղեցույց, իսկ 2024 թվականի սեպտեմբերից հավաքագրում է պաշտոնատար անձանց ներկայացրած տվյալները և հրապարակում դրանք Google Drive թղթապանակում:[57] Ներկայումս նվերների վերաբերյալ տեղեկությունները հաղորդվում են Excel ծրագրով պատրաստված էլեկտրոնային ձևաթղթերով, իսկ ԿԿՀ-ն դրանք հրապարակում է PDF ձևաչափով, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել կառուցվածքային վերլուծություն կամ համակարգված հանրային վերահսկողություն:

Թեև նվերների հաշվառման ռեեստրի ՏԱ-ն պատրաստ էր դեռևս 2024 թվականին, այնուամենայնիվ հարթակը մինչև նախորդ Գործողությունների ծրագրի ավարտը՝ 2025 թվականի դեկտեմբերը, ստեղծված չէր, որի հիմնական պատճառը ԱՄՆ արտաքին

աջակցության դադարեցումն էր, քանի որ նախորդ Գործողությունների ծրագրի շրջափուլում հարթակի ստեղծմանն աջակցում էր ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Հայաստանի բարեվարքություն» ծրագիրը: Այսպիսով, այս հանձնառության շրջանակներում շարունակվում են նվերների թվային ռեեստր ստեղծելու նախորդ ջանքերը, և ԿԿՀ-ն նախատեսում է բաց տվյալների ձևաչափով հրապարակել հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված և օրենքով թույլատրելի համարվող նվերների վերաբերյալ տեղեկություններ:

Հանձնառությամբ նախատեսվում է նաև ԿԿՀ-ի ռեեստրների, այդ թվում՝ հայտարարագրերի ռեեստրի, նվերների հաշվառման ռեեստրի և կուսակցությունների հաշվետվությունների ավտոմատացված ստուգման համակարգի ներդնում: Ներկայումս ԿԿՀ-ն ձեռքով է ստուգում կուսակցությունների տարեկան հաշվետվությունները, ինչպես նաև գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրերը (այսուհետ՝ գույքի և եկամուտների հայտարարագրեր)՝ օգտագործելով ռիսկերի վրա հիմնված գնահատումներն ու քաղաքացիներից և լրատվամիջոցներից ստացվող հաղորդումները, որոնք սահմանափակում են ստուգման շրջանակը:[58] Գույքի և եկամուտների հայտարարագրման համակարգը 2023 թվականից ամբողջությամբ թվայնացված է և թույլ է տալիս արտահանել ու վերլուծել տվյալները, սակայն փոխկապակցված չէ նվերների վերաբերյալ գործող տվյալների շտեմարանի, կուսակցությունների հաշվետվությունների և պետական այլ շտեմարանների՝ օրինակ՝ Կադաստրի պետական կոմիտեի, Պետական եկամուտների կոմիտեի և Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների հետ (այդ շտեմարանների տվյալներն օգտագործվում են պաշտոնատար անձանց եկամուտները, գույքը, բաժնեմասերը և նվիրատվությունները ստուգելու համար): Սահմանափակ մարդկային ռեսուրսներով և վերլուծական կարողություններով ԿԿՀ-ն տարեկան մշակում է ավելի քան 15 000 հայտարարագիր: Այս հանձնառության շրջանակներում ԿԿՀ-ն ներդնելու է կոռուպցիոն ռիսկերի վերլուծության համապարփակ ավտոմատացված գործիքներ՝ հիմնվելով պաշտոնատար անձանց հայտարարագրերից և կուսակցությունների հաշվետվություններից ԿԿՀ-ի հավաքագրած տվյալների վրա, որոնք թույլ կտան ավտոմատ կերպով արձանագրել ռիսկերի ազդանշաններ՝ ԿԿՀ-ի կողմից մանրամասն ուսումնասիրության համար: ԿԿՀ-ն 2024 թվականին նվերների հաշվառման ռեեստրի մշակումը ներկայացրել է նաև որպես Բաց կառավարման մարտահրավեր:[59]

Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

Թվային ռեեստրը և ավտոմատացված վերլուծական գործիքները կարող են զգալիորեն բարձրացնել բարեվարքության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը նշել են, որ թվային ռեեստրում նվերների մասին հայտնելու պահանջը կանխարգելիչ ազդեցություն ունի, ինչը կխրախուսի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց լինել ավելի զգույշ նվերներ ընդունելու հարցում:[60] Եթե այն փոխգործելի դարձվի ԿԿՀ-ի մյուս ռեեստրների և Կառավարության տվյալների շտեմարանների հետ, ապա այն կարող է հնարավորություն տալ համադրել տվյալները և նպաստել ռիսկերի վրա հիմնված վերահսկողությանը: Այն կարող է նաև դյուրացնել հանրային վերահսկողությունը և նվերներ նվիրելու գործելակերպերի օրինաչափությունների վերլուծությունը:[61]

Այնուամենայնիվ, մի շարք սահմանափակումներ նվազեցնում են հանձնառության հնարավոր ազդեցությունը: Նախ՝ ռեեստրն ընդգրկելու է միայն պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերները, մինչդեռ

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

թանկարժեք նվերները կարող են փոխանցվել անձնական ուղիներով կամ հայտարարագրվել որպես անձնական նվերներ: Թեև 200 000 ՀՀ դրամը գերազանցող արժեք ունեցող գույքի և դրամական նվիրատվությունների մասին պետք է տեղեկություններ ներկայացվեն տարեկան հայտարարագրերում, այնուամենայնիվ նվիրատուների ինքնությունը չի բացահայտվում՝ անձնական կյանքի գաղտնիության նկատառումներից ելնելով: Բացի դրանից, հայտարարագրեր ներկայացնելու պարտավորությունը վերաբերում է սահմանափակ թվով պաշտոնատար անձանց, այնուամենայնիվ նվերների հաշվառման ռեեստրը վերաբերում է բոլոր հանրային ծառայողներին, որոնցից շատերը պարտավոր չեն ներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագրեր: Հետևաբար նրանց անձնական նվերների մասին հանրությանը հասանելի տեղեկություններ չկան, թեև քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերն ընդգծում են, որ բոլոր տեսակի նվերների թափանցիկությունը կարևոր է կոռուպցիոն և բարեվարքության ռիսկերին արձագանքելու համար:[62] Երկրորդ՝ համակարգի արդյունավետությունը մեծապես կախված կլինի անձանց կողմից նվերների վերաբերյալ տեղեկությունների ինքնուրույն ներկայացումից և ներքին վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունից: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերից մեկը նշել է, որ հանրային ծառայողների՝ նվերների հաշվառման պահանջների մասին սահմանափակ իրազեկվածությունը և դրանց սխալ ըմբռնումը, մասնավորապես՝ ինչն է համարվում նվեր և ինչ շեմեր են կիրառվում, շարունակում են լուրջ մարտահրավեր լինել:[63] ԿԿՀ-ի վերահսկողական կարողությունները սահմանափակ են, և խախտումները բացահայտելու համար այն մեծապես հիմնվում է լրատվամիջոցների լուսաբանումների և բողոքների վրա: Թեև 2024 թվականին հաշվառվել է մոտ 30 նվեր, այնուամենայնիվ դրանք չհայտարարագրելու համար որևէ պատասխանատվության միջոց չի կիրառվել, ինչը վկայում է պահանջների կատարման նկատմամբ ոչ բավարար վերահսկողության մասին:[64] Միևնույն ժամանակ ԿԿՀ-ն նշում է, որ իր խորհրդատվական գործառույթը և տեղեկությունների բացահայտման պահանջները կանխարգելիչ ազդեցություն ունեն, և 2025 թվականին ներկայացվող տեղեկությունների ծավալը զգալիորեն աճել է:[65] Մասնավորապես, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների դիմումներով ԿԿՀ-ի տրամադրած խորհրդատվական կարծիքներն օգնել են կանխել նվերների ընդունման սահմանափակումների խախտումները՝ խուսափելով պատասխանատվության միջոց կիրառելու անհրաժեշտությունից: Այնուամենայնիվ, շարունակում է առկա լինել նվերների մասին ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացնելու վտանգը: Երրորդ՝ ԿԿՀ-ն նախատեսում է հրապարակել միայն ընդունված նվերների մասին տեղեկություններ՝ չներառելով դրանց հետագա տնօրինումը կամ տիրապետումը (օր.՝ պետությանը հանձնումը, վաճառքը կամ նվիրաբերումը), քանի որ դա դուրս է ԿԿՀ-ի լիազորությունների շրջանակից: Սա սահմանափակում է նվերները պետության կամ համայնքային սեփականությանը փոխանցելու ամբողջ գործընթացի թափանցիկությունը:

Ավտոմատացված մշտադիտարկման գործիքների արդյունավետության համար անհրաժեշտ կլինի ռիսկերի գնահատման հուսալի մեթոդաբանություն: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերից մեկն ընդգծել է հայտարարագրերի ձևաթղթերում տվյալների վալիդացման և համադրման դրվածքային գործառույթների անհրաժեշտությունը՝ անհամապատասխան կամ սխալ մուտքագրումները կանխելու նպատակով:[66] Բացի այդ, մինչև 2021 թվականը ներկայացված գույքի և եկամուտների հայտարարագրերի տվյալները չեն փոխարկվել բաց տվյալների ձևաչափի, ինչը սահմանափակում է երկարաժամկետ կտրվածքով վերլուծություն կատարելու հնարավորությունը: Նախատեսվող կարգավորմամբ ավտոմատացված գործիքների

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

համակարգը հիմնականում նախատեսված է ԿԿՀ-ի ներքին օգտագործման համար, իսկ ռիսկերի ազդանշանների ցուցիչները հանրությանը հասանելի չեն լինելու:[67] Թեև ավտոմատացումը կարող է ընդլայնել ստուգումների շրջանակը և բարելավել անհամապատասխանությունների բացահայտումը, այնուամենայնիվ հանրային հաշվետվողականության վրա դրա ազդեցությունը կախված կլինի նրանից, թե ինչպես կիրապարակվեն արդյունքները և ինչ միջոցներ կձեռնարկվեն դրանց հիման վրա:

Հաշվի առնելով նվերների վերաբերյալ տեղեկությունների ինքնուրույն ներկայացման սկզբունքից կախվածությունը, պահանջների կատարման ապահովման սահմանափակ մեխանիզմները, նվերների ստացման ամբողջ կենսափուլի ոչ լիարժեք թափանցիկությունը և տվյալների հասանելիության ու փոխգործելիության սահմանափակումները՝ ԱՀՄ-ն հանձնառության արդյունքներին միտված ներուժը գնահատում է չափավոր:

Կատարման ընթացքում հնարավորություններ, մարտահրավերներ և առաջարկություններ

Այս հանձնառության արդյունավետ կատարման դեպքում ռեեստրը կարող է բարելավել պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների թափանցիկությունն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը: Բացի դրանից, ավտոմատացված ստուգումը կարող է օգնել ԿԿՀ-ին համակարգված կերպով վերահսկել հայտարարագրերի տվյալների ճշգրտությունը, դյուրացնել տվյալների համադրումը և իրավախախտումների ու հնարավոր կոռուպցիոն ռիսկերի բացահայտումը: Հանձնառության հաջողությունը կախված կլինի ԿԿՀ համակարգերի փոխգործելիության մակարդակից և վերլուծական կարողություններից, ինչպես նաև պաշտոնատար անձանց ներկայացրած տվյալների որակից ու ամբողջականությունից: Կոռուպցիայի կանխարգելման վրա հանձնառության ազդեցությունը կախված կլինի նաև տվյալների ավտոմատացված վերլուծության և ռիսկերի ազդանշանների համակարգերի հիմքում ընկած՝ ռիսկերի գնահատման մեթոդաբանության արդյունավետությունից, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունից և դրանց նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցներից:

Շահագրգիռ կողմերն ընդգծել են պետական մարմիններում բարեվարքության հարցերով կազմակերպիչների[68] և էթիկայի հանձնաժողովների[69] սահմանափակ կարողությունները՝ նվերների հաշվառման գործընթացին աջակցելու և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու առումով, ինչպես նաև ԿԿՀ-ի սակավ ռեսուրսները՝ ստուգումներ և ռիսկային դեպքերի հետագա ուսումնասիրություն իրականացնելու համար:[70] Բացի դրանից, թվային ռեեստրը կարող է պոտենցիալ մեծացնել հաշվառվող նվերների թիվը, հետևաբար նաև ԿԿՀ-ի վերահսկողական աշխատանքի ծավալը և լրացուցիչ ծանրաբեռնել նրա առանց այդ էլ սահմանափակ կարողությունները (ներկայումս նվերների հաշվառմամբ զբաղվում է միայն մեկ աշխատակից):[71]

Կատարումն ամրապնդելու նպատակով ԱՀՄ-ն ԿԿՀ-ին առաջարկում է դիտարկել հետևյալ քայլերը.

- **Ամրապնդել պահանջների կիրարկման ապահովման և ստուգման մեխանիզմները՝ նվերների վերաբերյալ տեղեկությունների ինքնուրույն ներկայացման համակարգը փոխլրացնելու համար**, այդ թվում՝ սահմանելով նվերների վերաբերյալ կանոնների խախտումները հայտնաբերելու և դրանց համար պատասխանատվության միջոցներ կիրառելու

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

առավել հստակ ընթացակարգեր: Բարեվարքության հարցերով կազմակերպիչները պետք է ապահովվեն համապատասխան վերապատրաստմամբ և ռեսուրսներով՝ խորհրդատվական ու վերահսկողական գործառույթներն առավել արդյունավետ իրականացնելու համար: Կարևոր է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց տրամադրել լրացուցիչ ուղղորդում ու վերապատրաստում, բարձրացնել նրանց իրազեկվածությունը տեղեկություններ ներկայացնելու պարտականությունների և համակարգի օգտագործման վերաբերյալ:

- **Մշակել նվերների տեսակները գնահատելու հստակ և գործնական ուղեցույցներ**, որոնք հանրային ծառայողներին կօգնեն տարբերակում մտցնել թույլատրելի և արգելված նվերների միջև: Դրանք կարող են ներառել վարքագծի կանոնագրքերում քայլ առ քայլ ցուցումներ՝ միասնական մեկնաբանությունն ու կիրառումն ապահովելու համար: Թեև ԿԿՀ-ն հրապարակել է նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման ուղեցույց, այնուամենայնիվ լրացուցիչ ցուցումները կարող են իրավական դրույթներից բացի պարունակել գործնական բացատրություններ և օրինակներ, որոնք հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու հանրային ծառայողներին կօգնեն ավելի լավ հասկանալ նվերների թույլատրելիությունը՝ նախքան խորհրդատվական կարծիքի անհրաժեշտության առաջանալը:[72]
- **Ապահովել ավտոմատացված մշտադիտարկման՝ ռիսկերի վրա հիմնված հուսալի մեթոդաբանությունների մշակումը**՝ սահմանելով ռիսկերի ազդանշանների հայտնաբերման և դեպքերն ուսումնասիրելու համար դրանց առաջնահերթությունների սահմանման հստակ չափանիշներ: Այս գործիքների նախագծմանն ու փորձարկմանն աջակցելու համար ԿԿՀ-ն կարող է ներգրավել հայտարարագրերի տվյալների վերլուծության փորձառություն ունեցող ՔՀԿ-ներին և լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Որպեսզի գործիքները նպաստեն ոչ միայն ներքին վարչարարությանը, այլև հանրային վերահսկողությանը, կարևոր է **բարձրացնել վերլուծության արդյունքների թափանցիկությունը**, այդ թվում՝ հայտնաբերված ռիսկերի ազդանշանների և ռիսկերի օրինաչափությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակումը:
- **Բարելավել տվյալների որակը և նվերների հաշվառման ռեեստրի, գույքի հայտարարագրման համակարգի** և Կառավարության մյուս համապատասխան տվյալների շտեմարանների միջև փոխգործելիությունը՝ ներդնելով տվյալների ավտոմատ վալիդացման և փոխադարձ ստուգման գործառույթներ: Սա կարող է ենթադրել 2021 թվականի և դրան նախորդող տարիների հայտարարագրերի տվյալների փոխակերպում մեքենայաընթեռնելի ձևաչափերի՝ ժամանակային կտրվածքով վերլուծության հնարավորություն ստեղծելու նպատակով:

Կառավարությունը կարող է ձեռնարկել նաև հետևյալ քայլերը՝ նվերների վերաբերյալ տեղեկությունների թափանցիկությունը բարձրացնելու և կոռուպցիոն ռիսկերն ու շահերի բախման իրավիճակները կանխելու և (կամ) բացահայտելու նպատակով:

- **Բարձրացնել պետական սեփականությանը հանձնված նվերների թափանցիկությունը**՝ հրապարակելով պետությանը հանձնված թույլատրելի կամ արգելված նվերների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ, այդ թվում՝ դրանց հետագա կառավարման, տնօրինման և գտնվելու վայրի մասին: Քանի որ սա դուրս է ԿԿՀ-ի լիազորություններից, կարելի է թվայնացնել Պետական գույքի

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

կառավարման կոմիտեի համապատասխան ռեեստրը և ապահովել դրա փոխգործելիությունը նվերների հաշվառման ռեեստրի հետ: Սա հնարավորություն կտա նվերի սկզբնական փոխանցումից հետո ևս իրականացնել հանրային վերահսկողություն և ամրապնդել պետական գույքի կառավարման հաշվետվողականությունը: ԿԿՀ-ն նշում է, որ տեխնիկական կազմակերպության և Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ ձեռք է բերել պայմանավորվածություն համակարգում նախատեսել առանձին դաշտ, որտեղ կնշվի, թե արդյոք նվերը հանձնվել է պետությանը, և եթե այո, ապա ինչպես է այն հետագայում տնօրինվել:[73]

- **Երկարաժամկետ հեռանկարում համապատասխան օրենսդրական փոփոխություններով ընդլայնել նվերների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման շրջանակը**՝ դիտարկելով բոլոր թանկարժեք նվերների ներառումը՝ անկախ այն հանգամանքից՝ դրանք համարվում են «անձնական», թե կապված են պաշտոնեական պարտականությունների իրականացման հետ: Որպես այլընտրանք՝ գույքի և եկամուտների հայտարարագրերը կարող են պարունակել այդպիսի նվերների նվիրատուների ինքնության վերաբերյալ տեղեկություններ՝ թանկարժեք նվերների աղբյուրները պարզելու և շահերի հնարավոր բախման իրավիճակները բացահայտելու համար:

Այլ հանձնառություններ

Ստորև քննարկվում են ԱՀՄ-ի կողմից հեռանկարային չգնահատված հանձնառությունները:

Հանձնառություն 1-ը նպատակ ունի ենթաօրենսդրական ակտերի ընդունմամբ ապահովել տեղեկատվական համակարգերի և կիբեռանվտանգության վերաբերյալ վերջերս ընդունված օրենքների կիրարկումը: Նախորդ Գործողությունների ծրագրի շրջանակում Կառավարությունը մշակել է երեք օրենք, ինչպես նաև այլ օրենքներում փոփոխություններ, որոնք Ազգային ժողովն ընդունել է 2025 թվականի դեկտեմբերի 4-ին: Տվյալների կառավարման իրավական շրջանակը ներառում է «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը, որով կարգավորվում են հանրային տեղեկությունները, պետական տեղեկատվական համակարգը, տվյալների շտեմարանները, տվյալների փոխանակման շերտը և թվային, այդ թվում՝ մեքենայաընթեռնելի ձևաչափով հասանելիությունը (Հոդված 6), «Կիբեռանվտանգության մասին» օրենքը, որով սահմանվում են տեղեկատվական համակարգերը պաշտպանելու և կիբեռսպառնալիքներին հակազդելու կանոնները, ինչպես նաև «Տեղեկատվական համակարգերի կարգավորող մարմնի մասին» օրենքը, որով ստեղծվում և սահմանվում են անկախ վերահսկող մարմնի լիազորությունները: Բացի դրանից, մի շարք օրենքներում, այդ թվում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Տեղեկատվության ազատության մասին» օրենքներում ընդունվել են համապատասխան փոփոխություններ: Ենթաօրենսդրական ակտերը կամբողջացեն արդեն ընդունված օրենքների կիրառումը, այդ թվում՝ տեղեկատվություն տնօրինողների իրավունքներն ու պարտականությունները, կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների նույնականացման չափանիշները և թվային փոխակերպման ծրագրերի իրականացման և այդ ծրագրերի ֆինանսավորման գործընթացի համակարգման կարգը («Հանրային տեղեկությունների մասին» օրենք,

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Հոդված 4): Նախատեսվող կարգավորումների ամբողջական ցանկը սահմանվել է Վարչապետի 2026 թվականի փետրվարի 13-ի թիվ 117-Ա որոշմամբ:[74]

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ներկայացուցչի խոսքերով՝ բաց և մեքենայաընթեռնելի ձևաչափերով տվյալների հրապարակման առաջընթացը պայմանավորված է թվային ճարտարապետության, իրավական դաշտի և տվյալների կառավարման համակարգերի ընթացիկ բարեփոխումներով:[75] «Հանրային տեղեկությունների մասին» օրենքը պահանջում է բաց տվյալների ձևաչափերով տեղեկությունների նախաձեռնողական բացահայտում, և կարևոր կլինի հաշվի առնել պետական կառույցների սահմանափակ թվային կարողությունները, ինչպես նաև տեղեկությունների հրապարակման գործող պահանջների ոչ հետևողական կատարումը:[76] Այս համատեքստում ԱՀՄ-ն առաջարկում է հետևյալ քայլերը:

- Կառավարության որոշմամբ սահմանել «Հանրային տեղեկությունների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված տեղեկությունների նախաձեռնողական բացահայտման կարգը և նվազագույն շրջանակը, այդ թվում՝ 6-րդ հոդվածի համաձայն մեքենայաընթեռնելի ձևաչափով բացահայտվող տեղեկությունների շրջանակը:
- Ամրապնդել ինստիտուցիոնալ կարողությունները հանրային պաշտոններ զբաղեցնող անձանց թիրախային վերապատրաստմամբ և տվյալներ տրամադրողներին ու օգտագործողներին ներգրավելով տվյալների քաղաքականության վերաբերյալ ենթաօրենսդրական ակտերի մշակման և կիրարկման գործընթացում՝ դրանց կիրառելիությունն ու արդյունավետությունն ապահովելու համար: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերից մեկը առաջարկում է նաև, որ պետական մարմիններն իրականացնեն իրենց հասանելի տվյալների խմբերի համապարփակ ինքնագնահատում և գույքագրում՝ որոշելու համար, թե որոնք կարող են բաց լինել, և ապահովեն դրանց բացահայտման համար անհրաժեշտ տեխնիկական պայմաններ:[77]
- Հստակեցնել տվյալների բացահայտման պահանջների պահպանումը մշտադիտարկելու ինստիտուցիոնալ պատասխանատվությունը, այդ թվում՝ արդյոք այդ գործառույթն ամբողջությամբ կվերապահվի նոր կարգավորող մարմնին, թե կլրացվի լրացուցիչ վերահսկողական մեխանիզմներով, ինչպես օրինակ՝ առաջարկվող՝ անձնական տվյալների պաշտպանության անկախ մարմնով, որին նույնպես կարող է վերապահվել տեղեկություններ ստանալու իրավունքի պաշտպանությունը: «Հանրային տեղեկությունների մասին» օրենքով նախատեսված՝ տեղեկությունների մուտքի միասնական հարթակ ստեղծելիս Կառավարությունը կարող է հաշվի առնել նաև բաց տվյալների հարթակների միջազգային լավագույն փորձը:[78]

Հանձնառություն 6-ը նպատակ ունի լրացնել Հայաստանում դատական վիճակագրության հավաքագրման և հրապարակման բացերը: Թեև դատական համակարգում կիրառվում են մի քանի էլեկտրոնային հարթակներ, այնուամենայնիվ դրանք չեն ապահովում վարույթների կառավարման և համապարփակ ավտոմատացված վիճակագրական տվյալների գեներացման միասնական միջավայր: Գործող հանրային աղբյուրները, այդ թվում՝ «Դատալեքս» պորտալը և Դատական դեպարտամենտի կողմից Excel ձևաչափով հրապարակվող դատական վիճակագրությունը, տրամադրում են սահմանափակ և մասնատված տեղեկություններ:[79] Բացի դրանից, ՏՀՀԿ հակակոռուպցիոն ցանցը որպես թերություն նշել է բարձրաստիճան պաշտոնատար

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

անձանց կոռուպցիոն գործերով տարանջատված վիճակագրության բացակայությունը:[80] Դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարությունը նախատեսում է վարույթների թվայնացում և դատական վիճակագրությունն առցանց հասանելի ձևաչափով հրապարակելու մեխանիզմների ստեղծում:[81]

Հանձնառությամբ նախատեսվում է ներդնել վիճակագրական տվյալների միասնական շտեմարան, որը կհամախմբի մինչդատական և դատական վարույթների տվյալները, թույլ կտա դրանք զտել ըստ առանձին ցուցիչների և կապահովի բաց հասանելիություն: Արդյունքում միասնական վիճակագրական գործիքը կբարձրացնի դատարանների գործունեության թափանցիկությունը և հնարավորություն կտա քաղաքացիական հասարակությանը հանրային վերահսկողություն իրականացնել արդարադատության իրականացման նկատմամբ:

Հանձնառության իրականացման ժամկետում Արդարադատության նախարարությունը նախատեսում է Excel ծրագրում ձեռքով հավաքվող տվյալները ներառել վիճակագրական նոր հարթակում՝ դատական իշխանության կայքում տեղադրվող, օգտագործման համար հարմար և որոնման հնարավորություն ընձեռող տեղեկատվական վահանակում: Արդեն արդիականացված համակարգերից (օր.՝ քաղաքացիական և վարչական դատարանների համակարգերից) տվյալները հարթակ կփոխանցվեն նաև ինքնաշխատ եղանակով: Այն ոլորտներում, որտեղ շարունակում են կիրառվել հնացած համակարգեր, դատավորները մինչև ամբողջական փոխգործելիության ապահովումը կշարունակեն տվյալները վերբեռնել փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային փոխանակման համակարգ («Mulberry» համակարգ):[82] Արդարադատության նախարարությունն այս փուլային մոտեցումը դիտարկում է որպես փոխգործելիության խնդիրների միջանկյալ լուծում, որոնք խոչընդոտել էին նախորդ Գործողությունների ծրագրի իրականացումը:[83] Ձուգահեռ Արդարադատության նախարարությունը նախատեսում է բարելավել գործող վիճակագրական դասակարգումները՝ առաջնահերթություն տալով Բարձրագույն դատական խորհրդի սահմանած առանցքային ցուցանիշներին: Ակնկալվում է, որ դա կապահովի ինչպես տվյալների հրապարակման իրագործելիությունը, այնպես էլ փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման համար դրանց օգտակարությունը:[84]

Բարեփոխման արդյունավետությունը կախված կլինի համակարգերի հաջող ինտեգրումից, բավարար տեխնիկական կարողություններից և դատավորների, նրանց օգնականների ու դատարանների համապատասխան աշխատակիցների՝ նոր թվային գործիքների կիրառմանը հնարավոր դիմադրությունը հասցեագրելու կարողությունից: Հիմնվելով քաղաքացիական հասարակության կողմից 2022–2024 թվականների Գործողությունների ծրագրի գնահատման զեկույցում նշված առաջարկությունների վրա[85] ՝ ԱՀՄ-ն Արդարադատության նախարարությանն առաջարկում է՝

- Առաջնահերթություն տալ դատական գործերի քննության տևողության վերաբերյալ վիճակագրության հրապարակմանը և հնարավորություն ստեղծել որոնելու ու վերլուծելու գործերի վիճակագրությունը՝ ըստ առանձին դատավորների:
- Ընդլայնել վիճակագրական դասակարգումները՝ ներառելով համապատասխան ժողովրդագրական կամ մասնագիտական խմբեր (օր.՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք, հանրային ծառայողներ), ինչը կարող է բարձրացնել տվյալների վերլուծական արժեքը:
- • Հարթակի գործարկումից հետո համագործակցել Վարչապետի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության հետ դատավորների,

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

նրանց օգնականների և դատարանների համապատասխան աշխատակիցների կարողությունների զարգացման ուղղությամբ՝ ապահովելով տվյալների ժամանակին և որակյալ մուտքագրումը: Թիրախային իրազեկվածության բարձրացումը և օգտատերերի ներգրավումը կարող են խթանել նաև վիճակագրական տվյալների կիրառելիությունն ու օգտագործումը:

[1]ՏՀՁԿ (2024թ.), «*Նորարարական կարողությունն ու մասնակցային քաղաքականությունը Հայաստանում*», զեկույց, ՏՀՁԿ-ի հանրային կառավարման գնահատումներ, ՏՀՁԿ հրատարակչություն, Փարիզ, https://doi.org/10.1787/1efeba1a-en:

[2]Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն (ECNL) հիմնադրամ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ), *«ՔՀԿ չափիչ՝ ի գործ, Հայաստան 2025»*. երկրի վերաբերյալ զեկույց, Երևան, մուտքը՝ 21 սեպտեմբերի 2026թ., https://csometer.info/sites/default/files/2026-03/Armenia%202025%20Country%20Report%20ENG.pdf, Եվրոպական միության պատվիրակություն Հայաստանում, «ԵՄ ճանապարհային քարտեզ 2021-2027 թվականներին Հայաստանում քաղաքացիական հասարակության հետ ներգրավվածության համար», թարմացվել է 2025 թվականի հունիսին, EU-CSO Roadmap Armenia UPDATED June 2025.pdf, ՏՀՁԿ (2024թ.), «Նորարարական կարողության ու մասնակցային քաղաքականությունը» զեկույց, Լիլյա Աֆրիկյան (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 7 փետրվարի 2026թ., Արփինե Հակոբյան («ՀԿ կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 24 մարտի 2026թ., Սոնա Այվազյան («Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 5 փետրվարի 2026թ.:

[3]ՀՀ վարչապետի որոշում «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մայիսի 25-ի N 564-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», N 1204-Լ, 26 դեկտեմբերի 2024թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/201524:

[4]Աֆրիկյան, հարցազրույց:

[5] Աֆրիկյան, հարցազրույց:

[6]Հակոբյան, հարցազրույց, Լիանա Դոյդոյան (Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 20 մարտի 2026թ.:

[7]Հակոբյան, հարցազրույց, Այվազյան, հարցազրույց:

[8] Աֆրիկյան, հարցազրույց:

[9]Privind Transparenta Decizionala in Administratia Publica [Պետական կառավարման համակարգում որոշումների կայացման թափանցիկություն], Օրենք 52/2003, մաս I, թիվ 749, 3 դեկտեմբերի 2013թ., Ռումինիայի պաշտոնական տեղեկագիր, https://edirect.e-guvernare.ro/Uploads/Legi/14832/Legea%2052.htm:

[10]Sabiedrības līdzdalības kārtība attīstības plānošanas procesā [Զարգացման պլանավորման գործընթացում հանրային մասնակցության կարգ], Նախարարների կաբինետի 2024 թվականի հոկտեմբերի 15-ին ընդունված թիվ 639 որոշում, Latvijas Vēstnesis, 202, https://likumi.lv/ta/id/355632-sabiedribas-lidzdalibas-kartiba-attistibas-planosanas-procesa:

[11]«Brasil Participativo» [Մասնակցային Բրազիլիա], Gov.br, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://brasilparticipativo.presidencia.gov.br/:

[12]«Fii parte a democrației participative!» [Դարձի՛ր մասնակցային ժողովրդավարության մաս], Մոլդովայի Հանրապետության կառավարություն, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://particip.gov.md:

[13]«Il portale per le consultazioni pubbliche» [Հանրային քննարկումներ պորտալ], Իտալիայի կառավարություն, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://consultazione.gov.it/:

[14]«Ցանցեր», «Բաց կառավարում-Ֆինլանդիա», մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://opengov.fi/networks/:

[15]«Դեպքերի ուսումնասիրությունների գրադարան. համատեղ ուսումնառություն՝ առավել լայն հանրային ներգրավվածության համար» (Learn4PE), ՏՀՁԿ-ի Հանրային ոլորտի նորարարության օբսերվատորիա (ՀՈՆՕ), մուտքը՝ 5 օգոստոսի 2020թ., https://oecd-opsi.org/innovations/learn4pe/:

[16]«Sakråd» [«Փորձագիտական խորհրդատվություն»], Շվեդիայի կառավարության աշխատակազմ, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://regeringen.se/sakrad/:

[17]«Որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական մասնակցության լավագույն գործելակերպի կանոնագիրք», Եվրոպայի խորհրդի միջազգային ՀԿ-ների համաժողով, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://www.coe.int/en/web/ingo/civil-participation:

[18]Խորհրդակցական գործընթացների և մասնավորապես՝ քաղաքացիների ասամբլեաների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ՏՀՁԿ (2020թ.), *Քաղաքացիների նորարարական մասնակցություն և նոր ժողովրդավարական ինստիտուտներ. խորհրդակցական ալիքին համընթաց*», ՏՀՁԿ հրատարակչություն, Փարիզ, https://doi.org/10.1787/339306da-en: «Ասամբլեայի կազմակերպման ուղեցույցի կազմում», DemocracyNext, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://assemblyguide.demnext.org/:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

[19]«Բաց կառավարման ուղեցույց. բաց կառավարման հիմունքներ. մասնակցության սկզբունքների համընդհանուր կիրառում», Բաց կառավարման գործընկերություն, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://www.opengovpartnership.org/open-gov-guide/open-government-foundations-mainstreaming-participation/:
[20]«ARMEPS», Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://armeps.am/epps/home.do:
[21]«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին», N 386-Ն, 6 ապրիլի 2017թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/213560:
[22]«Հաշվետվություններ», Գնումների պլանների և պայմանագրերի կառավարում (ԳՊՊԿ), մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://armeps.am/ppcm/public/reports?lang=en:
[23]ՀՀ ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գնումների համակարգ, https://gnumner.minfin.am/en/:
[24]«Գնումների մասին», ՀՕ-21-Ն, ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, ARLIS, https://www.arlis.am/hy/acts/165080:
[25]e-AUCTION, մուտքը՝ 22 սեպտեմբերի 2026թ., https://eauction.armeps.am/en/user/login/:
[26]«Էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին», N 534-Ն, 18 մայիսի 2017թ., ARLIS, (ՀՀ), https://www.arlis.am/hy/acts/138560:
[27]Սևակ Մամյան («Ինֆոքոմ»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 23 մարտի 2026թ., Հակոբյան, հարցազրույց, *Պետական գնումների էլեկտրոնային հարթակների մոնիթորինգ*. լրագրողական հայացք. պրակտիկ զեկույց: Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն», 17 հունիսի 2022թ., http://www.foi.am/ researches/3755:
[28]ՏՀԶԿ, 2025թ., *Հայաստանի հակակոռուպցիոն մոնիթորինգի հինգերորդ փուլի հետագա ընթացքի վերաբերյալ զեկույց. Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր*, վերանայված տարբերակ, սեպտեմբեր 2025թ., https://www.oecd.org/content/dam/oecd/en/publications/reports/2025/09/armenia-fifth-round-of-anti-corruption-monitoring-follow-up-report_c898674e/3d273009-en.pdf:
[29]ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին», N 1393-Ն, 2 հոկտեմբերի 2025թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/213553:
[30]ՀՀ կառավարության որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», N 732-Ն, 23 մայիսի 2024թ., ARLIS, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193122:
[31]Ավագ Ավանեսյան (Ֆինանսների նախարարություն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 11 փետրվարի 2026թ.:
[32]Սերգեյ Շահնազարյան (Ֆինանսների նախարարություն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 6 ապրիլի 2026թ.:
[33]Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով, «Առաջարկվում է կատարելագործել հանրային գնումների ոլորտում շահերի բաշխման և հակակոռուպցիոն մեխանիզմները», 18 մարտի 2026թ., https://old.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=18&month=03&year=2026&NewsID=23404&lang=eng:
[34]ՏՀԶԿ, 2025թ., *Հայաստանի հակակոռուպցիոն մոնիթորինգի հինգերորդ փուլի հետագա ընթացքի վերաբերյալ զեկույց, ՍԻԳՄՄ և ՏՀԶԿ, 2025թ., «ՍԻԳՄՄ մոնիթորինգի զեկույցներ. Հանրային կառավարումը Հայաստանում. 2025թ.: Հանրային կառավարման սկզբունքներին համապատասխանության գնահատում»*, 20 նոյեմբերի 2025թ., https://www.sigmaweb.org/content/dam/sigma/en/publications/reports/2025/12/public-administration-in-armenia-2025_5c12af02/f996600c-en.pdf:
[35]«Հանրային ծախսերի ուսումնասիրություն», Tutki Hankintoja, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://openprocurement.fi/:
[36]«Միացյալ Թագավորություն. պայմանագրերի բաց տվյալների համար հանրային վահանակների ստեղծում», Բաց կառավարման գործընկերություն, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://www.opengovpartnership.org/the-open-gov-challenge/united-kingdom-public-dashboards-contracting-data/:
[37]Սոֆի Բրաուն, «Հանցագործությունների կանխարգելման հարցում գործընկերները. ինչպես քաղաքացիական հասարակությունն ու Կառավարությունը համագործակցեցին Ինդոնեզիայում պետական պայմանագրերը բաց դարձնելու ուղղությամբ, 27 ապրիլի 2022թ., https://www.open-contracting.org/2022/04/27/a-partnership-for-better-procurement-how-civil-society-and-government-worked-together-to-open-up-public-contracts-in-indonesia/:
[38]«Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագիր, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ) ԳՄՀԸ, վերջին անգամ թարմացվել է 2025թ.-ի փետրվարին, https://www.giz.de/en/worldwide/20315.html:
[39]«Դիմակայունություն՝ սկզբից», ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) հայաստանյան գրասենյակ, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://www.undp.org/armenia/projects/resilience-start:
[40]Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ) էլեկտրոնային կառավարման թվային հարթակ է, որը նախատեսված է համայնքների պաշտոնական կայքերի վարման և հանրային ծառայությունների կառավարման

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

համար: Այն օգտագործվում է Հայաստանի համայնքների մեծ մասում և մշակվել է Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶԿԿ) կողմից՝ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համագործակցությամբ:
[41]Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն հիմնադրամ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «*Հայաստանի 2025 թվականի երկրի վերաբերյալ զեկույց*»:
[42]Գայանե Նալբանդյան, Լուսինե Ավալյան (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն՝ (GIZ) ԳՄՀԸ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 13 մարտի 2026թ., Նաիրա Առաքելյան, Անի Թովմասյան («Արմավիրի զարգացման կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 23 մարտի 2026թ.:
[43]ՀՀ օրենք «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-337, 7 մայիսի 2002թ., Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, https://www.e-draft.am/en/projects/9105/about:
[44]Նալբանդյան, հարցազրույց: Թոմ Լանդես (Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն՝ (GIZ) ԳՄՀԸ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 13 մարտի 2026թ., Առաքելյան, Թովմասյան, հարցազրույց:
[45]Աշոտ Գիլոյան (Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 9 ապրիլի 2026թ., Նալբանդյան, հարցազրույց:
[46]Աֆրիկյան, հարցազրույց:
[47]Հասմիկ Մանասյան (ՄԱԶԾ հայաստան գրասենյակ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 10 ապրիլի 2026թ.:
[48]Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն, «Համայնքներում մասնակցային բյուջետավորման ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական ուղեցույց», https://api.mtad.am/storage/pages/files/2025/12/zip/24_16-18-sc796-694bda12a2421.zip:
[49]Նույն տեղում:
[50]Գիլոյան, հարցազրույց, Նալբանդյան, հարցազրույց, Թովմասյան, հարցազրույց:
[51]Գրիշա Խաչատրյան (Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 8 ապրիլի 2026թ.:
[52]Կիբո Նգովի, Հաշվետվողականության լաբորատորիա, «Մեքսիկայում մասնակցային բյուջետավորման առաջին քաղաքացիական օբսերվատորիա ստեղծելու կոչ», մամուլի հաղորդագրություն, 26 հոկտեմբերի 2021թ., https://accountabilitylab.org/call-to-create-the-first-citizen-observatory-for-participatory-budget-in-mexico/:
[53]«Դեպքերի ուսումնասիրությունների գրադարան. «Decide Madrid» հարթակ, ՏՀԶԿ-ի Հանրային ոլորտի օբսերվատորիա (ՀՈՆՕ), 28 հունվարի 2015թ., https://oecd-opsi.org/innovations/decide-madrid/:
[54]«Զվյահել, Ուկրաինա. դպրոցական մասնակցային բյուջետավորման իրականացում (UAZVL0003)», Բաց կառավարման գործընկերություն, https://www.opengovpartnership.org/members/zviahel-ukraine/commitments/uazvl0003/, «Օրժիցյա, Ուկրաինա. դպրոցական հանրային բյուջեի իրականացում (UAORZ0008)», Բաց կառավարման գործընկերություն, https://www.opengovpartnership.org/members/orzhytsia-ukraine/commitments/uaorz0008/, «Ուկրաինայի ևս վեց համայնքում կներդրվի ներառական դպրոցական մասնակցային բյուջետավորում», Ուկրաինայում Եվրոպայի խորհրդի գրասենյակ, 30 ապրիլի 2026թ., https://www.coe.int/en/web/kyiv/-/six-more-ukrainian-communities-to-introduce-inclusive-school-participatory-budgeting:
[55]«Նորարարություն և միջազգային փորձ հայաստանյան դպրոցների համար (մասնակցային բյուջետավորում)», «ՀԿ կենտրոն», 19 մայիսի 2026թ., https://ngoc.am/en/school-pb/, «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հաստատել է «ՀԿ կենտրոնի»՝ «Դպրոցական մասնակցային բյուջետավորում» կրթական ծրագիրը», «ՀԿ կենտրոն», 14 օգոստոսի 2026թ., https://ngoc.am/en/escs-spb-ngoc/:
[56]ՀՀ օրենք «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՕ-540-Ն, ընդունված է 2022 թվականի դեկտեմբերի 7-ին, ARLIS, https://www.arlis.am/hy/acts/172230, ՀՀ օրենք «Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՕ-149-Ն, ընդունված է 2024 թվականի ապրիլի 11-ին, ARLIS, https://www.arlis.am/hy/acts/192458, ՀՀ օրենք «Պետական գույքի կառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-148-Ն, ընդունված է 2024 թվականի ապրիլի 11-ին, ARLIS, https://www.arlis.am/hy/acts/192453, ՀՀ օրենք «Պետական արարողակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, ՀՕ-150-Ն, ընդունված է 2024 թվականի ապրիլի 11-ին, ARLIS, https://www.arlis.am/hy/acts/192459, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի որոշում «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների իրականացման կապակցությամբ ստացված նվերների հաշվառման, հանձնման և գնահատման, նվերների հաշվառման ռեեստրի վարման և ներկայացված տվյալներում փոփոխությունների կատարման, նվերների ընդունման սահմանափակումների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգերը, ինչպես նաև ռեեստրում լրացման և հրապարակման ենթակա տվյալների ցանկերը սահմանելու մասին», N 01-Ն, 22 դեկտեմբերի 2023թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/203012, ՀՀ կառավարության որոշում «Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, գույքի տնօրինման եղանակների ընտրության մեթոդաբանությունը, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, տնօրինման եղանակի

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները սահմանելու մասին», N 956-Ն, 20 հունիսի 2024թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/213580:

[57]Տե՛ս https://drive.google.com/drive/folders/1SHZ8YoAFdDkT8L-KNFm_g1wjCb1Q9EsW:

[58]ԿԿՀ-ի տարեկան զեկույցի տվյալների համաձայն՝ 2024 թվականին վերլուծվել է 74 պաշտոնատար անձի և նրանց ընտանիքի 121 անդամների 646 հայտարարագիր: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, «2024 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվություն», 2025թ., https://cpcarmenia.am/api/assets/7881511e-db19-45c0-94c5-40452ff88db0:

[59]«Բաց կառավարման մարտահրավեր. Հայաստան. հանրային պաշտոն զբաղեցնող անձանց նվերների հայտարարագրման թվային ռեեստր», Բաց կառավարման գործընկերություն, 26 նոյեմբերի 2024թ., https://www.opengovpartnership.org/stories/open-gov-challenge-armenia/:

[60]Սյուզաննա Սողոմոնյան (Հայ իրավաբանների ասոցիացիա), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 20 հունվարի 2026թ., Հասմիկ Տիգրանյան (ԱՅ ԷՖ ԷՍ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 4 փետրվարի 2026թ.:

[61]Մամյան, հարցազրույց:

[62]Արմեն Խուդավերդյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 19 փետրվարի 2026թ.:

[63]Սողոմոնյան, հարցազրույց:

[64]ՏՀԶԿ, 2025թ., «*Հայաստանում հակակոռուպցիոն մոնիթորինգի հինգերորդ փուլի հետագա ընթացքի վերաբերյալ զեկույց*»:

[65]Տիգրանուհի Խալաֆյան (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 3 մարտի 2026թ.:

[66]Մամյան, հարցազրույց:

[67]Տիգրան Ծատուրյան (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 5 փետրվարի 2026թ.:

[68]Այս գործառույթն իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ դրա համար նշանակված հանրային ծառայողները՝ վարքագծի կանոնների և նվերների ընդունման սահմանափակումների վերաբերյալ հանրային ծառայողներին խորհրդատվություն տրամադրելու, մասնագիտական ռիսկերը բացահայտելու և տեղական մակարդակում շահերի բախման իրավիճակների կանխարգելումն ապահովելու նպատակով («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 46):

[69]Պետական ծառայության առանձին տեսակների և համայնքային ծառայության մասին օրենքներով ստեղծված էթիկայի հանձնաժողովները հետևում են համապատասխան պետական մարմնում հանրային ծառայողների կողմից վարքագծի կանոնների պահպանմանը, քննում և լուծում են բացահայտված խախտումների հետ կապված հարցերը, ինչպես նաև իրավասու մարմիններին կամ պաշտոնատար անձանց ներկայացնում են հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջների, վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման իրավիճակների կանխարգելմանն ու վերացմանն ուղղված առաջարկություններ: («Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 44-45):

[70]Խալաֆյան, հարցազրույց, Ծատուրյան, հարցազրույց, Տիգրանյան, հարցազրույց:

[71]Խալաֆյան, հարցազրույց:

[72]«Նվերների թույլատրելիության վերաբերյալ խորհրդատվական կարծիքի տրամադրման մեթոդական ուղեցույց», Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, 25 հունիսի 2024թ., https://shorturl.at/TkQmV:

[73]Տեղեկությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ԱՀՄ-ին տրամադրվել է սույն զեկույցի հրապարակմանը նախորդող ուսումնասիրության ընթացքում, 17 հոկտեմբերի 2026թ.:

[74]ՀՀ վարչապետի որոշում «Կիբեռանվտանգության մասին», «Հանրային տեղեկությունների մասին», «Տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնի մասին», «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական գաղտնիքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղեկատվության ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին», N 117-Ա, 13 փետրվարի 2026թ., ARLIS, https://www.arlis.am/hy/acts/220963:

[75]Արտյոմ Մեսրոպյան (Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 19 մարտի 2026թ.:

[76]Դոյդոյան, հարցազրույց, Մեսրոպյան, հարցազրույց, Ոչ առևտրային իրավունքի եվրոպական կենտրոն հիմնադրամ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն», «Հայաստանի 2025 թվականի երկրի վերաբերյալ զեկույց»:

[77]Դոյդոյան, հարցազրույց:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

[78]Տե՛ս, օրինակ՝ հետևյալ երկրների բաց տվյալների հարթակները. Կանադա՝ «Բաց տվյալների և տեղեկությունների օգտագործում և հրապարակում», Կանադայի կառավարություն, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://open.canada.ca/en/open-data, Էստոնիա՝ «Andmete teabevärav» [«Էստոնիայի տվյալների հարթակ»], մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://avaandmed.eesti.ee/, Ֆինլանդիա՝ «Ֆինլանդիայի բոլոր բաց տվյալները՝ մեկ վայրում», Avoin data, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://www.avoindata.fi/en, Ուկրաինա՝ «Բաց տվյալների հարթակ», Ուկրաինայի թվային փոխակերպման նախարարություն, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://data.gov.ua/: Բաց տվյալների այլ հարթակներ կարելի է գտնել «Տվյալների հարթակներ. աշխարհի բաց տվյալների հարթակների համապարփակ ցանկ» աղբյուրում, «Open Knowledge Foundation», մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://dataportals.org/:

[79]«Վիճակագրություն», Բարձրագույն դատական խորհուրդ, մուտքը՝ 30 մարտի 2026թ., https://old.court.am/index.php/hy/statistic: Թարմացված կայքում վիճակագրական տվյալներն այժմ ներկայացված են ըստ դատարանների տեսակների՝ https://www.court.am/մշտադիտարկում-և-վիճակագրություն. https://court.am/hy/statistic:

[80]ՏՀԶԿ, 2025թ., «*Հայաստանում հակակոռուպցիոն մոնիթորինգի հինգերորդ փուլի հետագա ընթացքի վերաբերյալ զեկույց*»:

[81]«Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022–2026 թվականների ռազմավարություն», Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, https://moj.gov.am/api/assets/4cf3657a-b06a-4dea-b566-bbd9cb68ac45:

[82]Օքսաննա Աբրահամյան (Արդարադատության նախարարություն), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 11 մարտի 2026թ.:

[83]Տե՛ս «Հայաստանի 2022–2024 թվականների արդյունքների վերաբերյալ զեկույց», Բաց կառավարման գործընկերություն, 30 հունիսի 2024թ., https://www.opengovpartnership.org/documents/armenia-results-report-2022-2024/:

[84]«Հայաստանի Հանրապետության դատարաններում՝ ըստ դատական գործերի վիճակագրական դասակարգիչները և Հայաստանի Հանրապետության դատարանների և դատավորների գործունեության վերաբերյալ հրապարակվող վիճակագրական հաշվետվությունների օրինակելի ձևանմուշները սահմանելու մասին», ԲԴԽ-122-Ո-408, 30 դեկտեմբերի 2022թ., Բարձրագույն դատական խորհուրդ, https://court.am/articles/բդխ-որոշումներ/1654:

[85]«Գործողությունների ծրագրի գնահատում. Հայաստան 2022–2024», Բաց կառավարման գործընկերություն, 15 հունիսի 2023թ., https://www.opengovpartnership.org/documents/armenia-action-plan-review-2022-2024/:

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Բաժին III. Մեթոդաբանություն

Սույն փաստաթուղթը Գործողությունների ծրագրի առանձնահատկությունների, ԱՀՄ-ի վերհանած ուժեղ կողմերի և մարտահրավերների համառոտ, անկախ ու տեխնիկական գնահատումն է, որի նպատակն է նպաստել դրա առավել արդյունավետ իրականացմանը: ԱՀՄ-ն ընդգծում է այն հանձնառությունները, որոնք ունեն արդյունքներին միտված առավել մեծ ներուժ, երկրի շահագրգիռ կողմերի համար ունեն բարձր առաջնահերթություն, ճանաչված են ազգային բաց կառավարման համատեքստում որպես առաջնահերթություն կամ հանդիսանում են այդ գործոնների համադրություն:

Գործողությունների ազգային ծրագրի իրականացման ամբողջ շրջափուլի ընթացքում ԱՀՄ-ն պատրաստել է հետևյալ փաստաթղթերը.

- **Համատեղ մշակման համառոտ տեղեկանք.** համառոտ փաստաթուղթ, որն ընդգծում է ԱՀՄ նախորդ զեկույցներից քաղված դասերը՝ տվյալ երկրի ԲԿԳ գործընթացին, Գործողությունների ծրագրի նախագծմանը և ընդհանուր փորձի ձեռքբերմանն աջակցելու նպատակով:
- **Գործողությունների ծրագրի գնահատում.** Գործողությունների ծրագրի առանձնահատկությունների և ԱՀՄ-ի վերհանած ուժեղ կողմերի և մարտահրավերների տեխնիկական գնահատում, որի նպատակն է նպաստել դրա առավել արդյունավետ իրականացմանը:
- **Միջնաժամկետ գնահատում.** քառամյա Գործողությունների ծրագրերի գնահատում՝ դրանց միջնաժամկետ թարմացումից հետո: Գնահատումը վերլուծում է թարմացված Գործողությունների ծրագրի նոր կամ էականորեն փոփոխված հանձնառությունները, ԲԿԳ կանոնների պահպանումը, ինչպես նաև տրամադրում է ոչ ֆորմալ տեղեկություններ իրականացման առաջընթացի վերաբերյալ:
- **Արդյունքների վերաբերյալ զեկույց.** իրականացման ընդհանուր գնահատում, որը շեշտադրում է քաղաքականության մակարդակով արձանագրված արդյունքների և փոփոխությունների տեղի ունենալու եղանակների վրա: Այն ստուգում է նաև ԲԿԳ կանոնների պահպանումը և նպաստում է հաշվետվողականության ապահովմանը ու երկարաժամկետ փորձառության ձեռքբերմանը:

Գործողությունների ծրագրի գնահատման մեջ ԱՀՄ-ն գնահատում է հանձնառությունները՝ կիրառելով երեք ցուցանիշ.

1. Ստուգելիություն. ԱՀՄ-ն որոշում է՝ արդյոք հանձնառությունը ստուգելի է Գործողությունների ծրագրում ներկայացված ձևակերպման հիման վրա: Ցուցանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- **Այո/Ոչ.** Արդյոք նշված նպատակներն ու առաջարկվող գործողությունները բավարար չափով հստա՞կ են և ներառո՞ւմ են օբյեկտիվորեն ստուգելի միջոցառումներ՝ իրականացումը գնահատելու համար:
- Ստուգելի չհամարվող հանձնառությունները գնահատման ենթակա չեն, ուստի հետագա գնահատում չի իրականացվում:

2. Համապատասխանում են բաց կառավարման շրջանակին. ԱՀՄ-ն որոշում է՝ արդյոք հանձնառությունը վերաբերում է «Բաց կառավարման գործընկերության հռչակագրով» և ԲԿԳ կառավարման կանոնադրությամբ սահմանված բաց կառավարման

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

արժեքներին՝ թափանցիկությանը, քաղաքացիական մասնակցությանը և (կամ) հանրային հաշվետվողականությանը: Հանձնառության տեքստի մանրամասն ուսումնասիրության հիման վրա ցուցանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- **Այո/Ոչ.** արդյոք հանձնառությունն ուղղվա՞ծ է քաղաքականության որևէ ոլորտ, կառույց կամ որոշումների կայացման գործընթաց առավել թափանցիկ, մասնակցային կամ հանրության առջև հաշվետու դարձնելուն:

Հանձնառությունների վերլուծության ընթացքում բաց կառավարման համապատասխան սկզբունքներին համապատասխանությունը որոշելու համար որպես ուղենիշ կարող են օգտագործվել ԲԿԳ յուրաքանչյուր արժեքին վերաբերող հետևյալ հարցերը.

- **Թափանցիկություն.** Կառավարությունը կբացահայտի՞ ավելի շատ տեղեկություններ, կբարելավի՞ տեղեկություններ ստանալու իրավունքը երաշխավորող իրավական կամ ինստիտուցիոնալ կարգավորումները, կբարձրացնի՞ հանրությանը բացահայտվող տեղեկությունների որակը կամ կբարելավի՞ պետական որոշումների կայացման գործընթացների կամ կառույցների թափանցիկությունը:
- **Քաղաքացիական մասնակցություն.** Կառավարությունը կստեղծի՞ այնպիսի հնարավորություններ, գործընթացներ կամ մեխանիզմներ կամ կբարելավի՞ արդեն իսկ առկա հնարավորությունները, գործընթացները կամ մեխանիզմները, որոնց միջոցով հանրությանը կկարողանա տեղեկություններ տրամադրել, ազդել քաղաքականությունների, օրենքների և (կամ) որոշումների վրա կամ մասնակցել դրանց համատեղ մշակմանը: Կառավարությունը կստեղծի՞, կապահովի՞ փոքրամասնությունների, մարգինալացված կամ ոչ բավարար ներկայացված խմբերի մասնակցության մեխանիզմները կամ կբարելավի՞ դրանք:

  Կառավարությունը կբարելավի՞ քաղաքացիական հասարակության գործունեության համար նպաստավոր միջավայրը (այդ թվում՝ ՀԿ-ների վերաբերյալ օրենքները, ֆինանսավորման մեխանիզմները, հարկումը, հաշվետվությունների ներկայացման պահանջները և այլն): Կառավարությունը կբարելավի՞ քաղաքացիական տարածքին առնչվող իրավական, քաղաքականության, ինստիտուցիոնալ կամ գործնական պայմանները, օրինակ՝ արտահայտվելու, միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատությունը, որոնք կնպաստեն հանրային կյանքին մասնակցությանը: Կառավարությունը միջոցներ կձեռնարկի՞ կեղծ տեղեկություններին կամ ապատեղեկատվությանը, հատկապես առցանց միջավայրում հակազդելու համար, որպեսզի մարդկանց հասանելի լինի վստահելի և փաստերի վրա հիմնված տեղեկություններ (ինչը կարող է ներառել թվային և մեդիագրագիտության արշավներ, փաստերի ստուգում կամ անկախ լրատվամիջոցների էկոհամակարգի խթանում):
- **Հանրային հաշվետվողականություն.** Կառավարությունը կստեղծի՞ կամ կբարելավի՞ պաշտոնատար անձանց՝ իրենց գործողությունների համար հանրության առջև հաշվետու լինելու պահանջն ապահովելու հնարավորությունները: Կառավարությունը կապահովի՞ իրավական, քաղաքականության կամ ինստիտուցիոնալ շրջանակներ՝ պաշտոնատար անձանց հաշվետվողականությանը նպաստելու համար:

3. Արդյունքներին միտված ներուժ՝ ԱՀՄ-ն վերլուծում է ակնկալվող արդյունքները և այն ներուժը, որոնք հանձնառության կատարումից հետո կստուգվեն ԱՀՄ արդյունքների

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

վերաբերյալ զեկույցում: Արդյունքներին միտված ներուժը նախնական պատկերացումն է այն մասին, թե որքանով հանձնառությունը կարող է արդյունավետ արդյունքներ ապահովել՝ հիմնվելով Գործողությունների ծրագրում դրա ձևակերպման և համապատասխան քաղաքականության ոլորտում առկա իրավիճակի վրա: Ցուցանիշը գնահատվում է հետևյալ կերպ.

- **Ոչ հստակ.** հանձնառությունն ուղղված է գործող օրենսդրությանը, պահանջներին կամ քաղաքականություններին համապատասխան արդեն իսկ կիրառվող գործելակերպերի շարունակմանը՝ առանց նշելու, թե ինչ հավելյալ արժեք է ստեղծվում կամ ինչպես է ընդլայնվում «բաց կառավարման» մոտեցումը՝ կիրառվող գործելակերպի համեմատ:
- **Չափավոր.** դրական, սակայն առանձին նախաձեռնություն կամ գործընթացների, գործելակերպերի կամ քաղաքականությունների փոփոխություն: Հանձնառությունը Կառավարության կամ համապատասխան քաղաքականության ոլորտը կարգավորող կառույցների համար չի առաջացնում պարտադիր կամ ինստիտուցիոնալացված փոփոխություններ: Դրանց օրինակներ են գործիքների (օրինակ՝ կայքերի) ստեղծումը կամ տվյալների հրապարակումը, վերապատրաստումները կամ պիլոտային ծրագրերը:
- **Զգալի.** սա կարող է արմատապես փոխել այն գործելակերպերը, քաղաքականությունները կամ կառույցները, որոնք կարգավորում են որևէ քաղաքականության ոլորտ, հանրային հատված կամ քաղաքացիների ու պետության միջև հարաբերությունները: Հանձնառությունը Կառավարման համար առաջացնում է պարտադիր և ինստիտուցիոնալացված փոփոխություններ:

Սույն գնահատման շրջանակներում վերլուծվում են հեռանկարային հանձնառությունները: Վերջիններս ստուգելի են, համապատասխանում են բաց կառավարման շրջանակին և ապահովում են արդյունքներին միտված առնվազն չափավոր ներուժ: Հեռանկարային հանձնառությունները կարող են առաջնահերթություն լինել նաև ազգային շահագրգիռ կողմերի համար կամ տվյալ համատեքստում: ԱՀՄ-ն կարող է խմբավորել այն հանձնառությունները, որոնք ունեն ընդհանուր քաղաքականության նպատակ կամ նպաստում են միևնույն բարեփոխմանը կամ քաղաքականության խնդրին: Խմբավորված հանձնառությունների արդյունքներին միտված ներուժը գնահատվում է որպես մեկ ամբողջություն:

Սույն Գնահատումը պատրաստվել է ԱՀՄ-ի կողմից՝ հետազոտող Տաթևիկ Մարգարյանի և արտաքին փորձագետ-գրախոս Ջեֆֆ Լովիթթի համագործակցությամբ: Սույն Զեկույցը պատրաստվել է ԱՀՄ ընթացակարգերի ձեռնարկին և արհեստական բանականության (ԱԲ) կիրառման վերաբերյալ ուղեցույցին համապատասխան: Սույն փաստաթղթի ներքին գնահատման ընթացքում ԱՀՄ-ն ստուգում է եզրահանգումների ճշգրտությունը և լրացուցիչ տեղեկություններ ստանում փորձագիտական գնահատման, անհրաժեշտության դեպքում ԲԿԳ աջակցության ստորաբաժանման արձագանքների, երկրի շահագրգիռ կողմերի հետ հարցազրույցների ու տեղեկությունների վալիդացման, արտաքին փորձագիտական գնահատման և ԱՀՄ փորձագետների միջազգային խմբի (ՓՄԽ) վերահսկողության միջոցով:[1] ԱՀՄ մեթոդաբանությունը, փաստաթղթերի որակը և գնահատման գործընթացը վերահսկվում է ՓՄԽ-ի կողմից:[2]

[1]«Փորձագետների միջազգային խումբ», Բաց կառավարման գործընկերություն, մուտքը՝ 15 հուլիսի 2024թ., https://www.opengovpartnership.org/about/who-we-are/international-experts-panel:

[2]Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս, «Ամփոփ նկարագիր. Անկախ հաշվետվական մեխանիզմ», Բաց կառավարման գործընկերություն, մուտքը՝ 15 հուլիսի 2024թ., https://www.opengovpartnership.org/irm-guidance-overview:

Հավելված I. Հանձնառությունների վերաբերյալ տվյալներ[1]

Հանձնառություն 1. Տվյալների քաղաքականությունը սահմանող օրենքների կիրարկման ապահովում

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

Հանձնառություն 2. Մասնակցային կառավարման կատարելագործում և ներդնում

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

Հանձնառություն 3. Էլեկտրոնային գնումների համապարփակ համակարգ. Ինքնաշխատ եղանակով իրական շահառուների տվյալների փոխանցում

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ զգալի

Հանձնառություն 4. Տեղական մակարդակում հանրային մասնակցության մեխանիզմներ

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ զգալի

Հանձնառություն 5. Նվերների հաշվառման էլեկտրոնային ռեեստրի և կոռուպցիոն ռիսկերի վերլուծության ավտոմատ համակարգ

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

Հանձնառություն 6. «eCourt-statistics» վիճակագրական վերլուծական գործիք

- Ստուգելիություն. Այո
- Համապատասխանո՞ւմ է բաց կառավարման շրջանակին Այո
- Արդյունքներին միտված ներուժ՝ չափավոր

[1] Խմբագրական նշում. Խմբավորված հանձնառությունների դեպքում արդյունքներին միտված ներուժը գնահատվում է հանձնառությունների խմբի, այլ ոչ թե յուրաքանչյուր հանձնառության մակարդակով: Հանձնառությունների վերնագրերը կարող են խմբագրված լինել՝ հակիրճության նպատակով: Հանձնառությունների ամբողջական տեքստի

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

համար անցիր հետևյալ հղմամբ՝ https://www.opengovpartnership.org/documents/armenia-action-plan-2025-2027-december/:

Հավելված II. Գործողությունների ծրագրի համատեղ մշակում

ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափանիշներն ուղեցույց են, որի նպատակն է աջակցել ԲԿԳ անդամներին համագործակցային ԲԿԳ գործընթացներ իրականացնելու հարցում:[1] Չափանիշները ներառում են ԲԿԳ մասնակցային և թափանցիկ գործընթացների ելակետային հիմքը սահմանող նվազագույն պահանջներ: Գործողությունների ծրագրի գնահատման շրջանակներում ԱՀՄ-ն գնահատում է Գործողությունների ծրագրի համատեղ մշակման ընթացքում կիրառելի նվազագույն պահանջների պահպանումը:[2] Այն անդամները, որոնք չեն կատարել բոլոր նվազագույն պահանջները, համարվում են ԲԿԳ գործընթացին հակասող ձևով գործող:

Հայաստանը չի գործում ԲԿԳ գործընթացին համապատասխան, քանի որ այն Գործողությունների ծրագրի մշակման ընթացքում չի կատարել բոլոր կիրառելի նվազագույն պահանջները: ԱՀՄ-ն երկու տարի անց կրկին կգնահատի Հայաստանի կողմից ԲԿԳ գործընթացի պահանջների կատարումը: Այն անդամները, որոնք ներկայումս չեն գործում ԲԿԳ գործընթացին համապատասխան, կարող են շտկել իրենց կարգավիճակը՝ կատարելով հաջորդ գնահատման պահին կիրառելի նվազագույն պահանջները:[3]

Աղյուսակ 2. Համապատասխանություն նվազագույն պահանջներին

Նվազագույն պահանջ	Կատարվե՞լ է
1.1 Երկխոսության հարթակ. Հայաստանի ԲԿԳ աշխատանքային խմբին կարող են միանալ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և ՔՀԿ-ների այն շահագրգիռ ներկայացուցիչները, որոնք հետաքրքրություն են հայտնել ԲԿԳ գործընթացների նկատմամբ (նրանց մեծ մասը մասնակցել է նախորդ Գործողությունների ծրագրերի համատեղ մշակման և իրականացման գործընթացին): 2020 թվականից Աշխատանքային խումբը գործել է ոչ ֆորմալ հիմունքներով, քանի որ Վարչապետի՝ դրա կազմը սահմանող վերջին որոշումը վերաբերում էր 2018–2020 թվականների Գործողությունների ծրագրին: 2025 թվականին Աշխատանքային խումբը գումարել է ընդամենը մեկ նիստ՝ 2025 թվականի հունիսի 2-ին՝ վերջին զարգացումները և նոր նախաձեռնությունները՝ որպես Գործողությունների վեցերորդ ծրագրի հնարավոր հանձնառություններ քննարկելու նպատակով:[4] Սույն Զեկույցը պատրաստելու պահին Աշխատանքային խումբը 2025 թվականի հունիսից ի վեր նիստեր չէր գումարել, այդ թվում՝ 2025 թվականի դեկտեմբերին Գործողությունների ծրագրի ընդունումից հետո՝ այսպիսով չկատարելով առաջին Չափանիշ 1-ով սահմանված՝ առնվազն վեց ամիսը մեկ նիստ գումարելու նվազագույն պահանջը: Գործողությունների ծրագրի մշակման ընթացքում Աշխատանքային խմբին մասնակցության հիմնական կանոնները չեն հրապարակվել, սակայն նիստի մասին տեղեկությունները տարածվել են ԲԿԳ Հայաստանի ֆեյսբուքյան էջի միջոցով, ինչպես նաև Կառավարության՝ ԲԿԳ հարցերով պատասխանատուի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկվել են շահագրգիռ կողմերին:	Ոչ

Աշխատանքային խմբին միանալու հնարավորության և անդամակցության հայտում ներառվող տվյալները հրապարակված են Կառավարության՝ ԲԿԳ-ի կայքում:[5] Այնուամենայնիվ, Աշխատանքային խմբի լիազորությունների և պարտականությունների կամ ԲԿԳ գործընթացին մասնակցության հիմնական կանոնների վերաբերյալ հրապարակային տեղեկություններ առկա չեն:	
2.1 ԲԿԳ կայք. Վարչապետի աշխատակազմը 2021 թվականից վարում է ԲԿԳ կայքը:[6] Այն հանրամատչելի է՝ առանց մուտքի սահմանափակումների: Կայքում առկա են ԲԿԳ-ի, նախորդ Գործողությունների ծրագրերի մասին ընդհանուր տեղեկություններ, նորություններ և այլ տեղեկություններ: Սակայն կայքում տեղադրված տեղեկությունները հնացած են, և ԱՀՄ-ի կողմից հետազոտության պահին այնտեղ հրապարակված չէր Գործողությունների վեցերորդ ծրագիրը: Վարչապետի աշխատակազմը վարում է նաև ԲԿԳ Հայաստան նախաձեռնության պաշտոնական ֆեյսբուքյան էջը:[7] Այդ ֆեյսբուքյան էջում Գործողությունների վեցերորդ ծրագրին հղումը չկա. առկա է միայն ԲԿԳ ֆեյսբուքյան էջի՝ 2026 թվականի փետրվարի 13-ի գրառումը, որով հայտարարվում է ծրագրի մեկնարկի մասին:[8] ԱՀՄ-ն ԲԿԳ կայքը կամ սոցիալական ցանցի էջը համարում է «վարվող», եթե դրանում առնվազն հրապարակված է երկրի վերջին գործողությունների ծրագիրը: Քանի որ ո՛չ Վարչապետի աշխատակազմի ԲԿԳ կայքում, ո՛չ ԲԿԳ Հայաստանի ֆեյսբուքյան էջում վեցերորդ ծրագիրը հրապարակված չէ, ԱՀՄ-ն գնահատում է, որ 2.1 նվազագույն պահանջը կատարված չէ:	Ոչ
2.2 Տեղեկատվական պահոց. ԲԿԳ պաշտոնական կայքը 2022 թվականից չի թարմացվել և չի պարունակում Գործողությունների վեցերորդ ծրագրի վերաբերյալ տեղեկություններ: ԲԿԳ Հայաստան նախաձեռնության պաշտոնական ֆեյսբուքյան էջը պարբերաբար թարմացվում է, այդ թվում՝ հրապարակվում են Գործողությունների վեցերորդ ծրագրի համատեղ մշակման գործընթացի և հանձնառությունների վերաբերյալ տեղեկություններ: Հետևաբար ԱՀՄ-ն գնահատում է, որ 2.2 նվազագույն պահանջը կատարվել է Գործողությունների վեցերորդ ծրագրի համատեղ մշակման ընթացքում:	Այո
3.1 Նախնական ծանուցում. Վարչապետի աշխատակազմը 2025 թվականի հունվարի 31-ին շահագրգիռ կողմերին էլեկտրոնային փոստով ուղարկել է Գործողությունների վեցերորդ ծրագրի ժամանակացույցի և առաջնահերթությունների նախագիծը: Ժամանակացույցը համացանցում հրապարակված չէ: 2025 թվականի ապրիլի 2-ին ԲԿԳ հարցերով պատասխանատուն էլեկտրոնային փոստով շահագրգիռ կողմերին տեղեկացրել է ծրագրի համատեղ մշակման մեկնարկի, այդ թվում՝ առաջնահերթ ուղղությունների և առաջարկություններ ներկայացնելու հնարավորությունների մասին, ինչպես նաև հրապարակել հայտարարություններ Կառավարության պաշտոնական կայքում և ԲԿԳ ֆեյսբուքյան էջում:[9] Առաջարկությունների ներկայացման վերջնաժամկետը 2025 թվականի մայիսի 30-ն էր:	Այո
3.2 Իրազեկում. ԲԿԳ գործընթացների մասին տեղեկությունները տարածվել են Կառավարության սոցիալական ցանցերի միջոցով, ինչպես նաև Կառավարության ու քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերի կազմակերպած միջոցառումների, օրինակ՝ «Բաց կառավարման շաբաթ» միջոցառման ընթացքում:[10]	Այո
3.3 Հետադարձ կապի մեխանիզմ. Կառավարության պաշտոնական կայքում և ԲԿԳ ֆեյսբուքյան էջում հրապարակվել է Գործողությունների ծրագրի մշակման մասին հայտարարություն՝ Google Forms ձևաթղթով	Այո

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

առաջարկություններ ներկայացնելու հնարավորությամբ:[11] Ներկայացված առաջարկությունների վերաբերյալ փաստաթղթավորված ապացույցներ չկան: 2025 թվականի նոյեմբերին Կառավարությունը Գործողությունների ծրագրի նախագիծը հանրային քննարկման է ներկայացրել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (e-draft.am)՝ մեկնաբանություններ ներկայացնելու համար սահմանելով 16 օր ժամկետ:[12] Հարթակում մեկնաբանություններ չեն ներկայացվել:	
4.1 Հիմնավորված արձագանք. Գործողությունների վեցերորդ ծրագրի մշակման գործում շահագրգիռ կողմերի ունեցած ներդրման վերաբերյալ հրապարակված տեղեկություններ չկան: Վարչապետի աշխատակազմում ԲԿԳ հարցերով պատասխանատուի խոսքերով՝ առաջարկություններ ստացվել են երեք կազմակերպություններից, սակայն դրանք արդեն ներառված էին ընթացիկ բարեփոխումներում կամ չէին համապատասխանում Կառավարության կողմից Գործողությունների վեցերորդ ծրագրի համար առաջարկված թեմաներին:[13] Վարչապետի աշխատակազմն առաջարկություններին գրավոր պատասխաններ չի տրամադրել, սակայն բանավոր արձագանքել է Գործողությունների վեցերորդ ծրագրի վերաբերյալ խորհրդակցություններից մեկի ընթացքում առաջարկություն ներկայացրած երեք կազմակերպություններից մեկին:	Ոչ

Վարչապետի աշխատակազմում Կառավարության՝ ԲԿԳ հարցերով պատասխանատուն տեղեկություններ է տարածել ԲԿԳ Աշխատանքային խմբի էլեկտրոնային հասցեների ցանկի միջոցով: Քաղաքացիական հասարակության մի շարք շահագրգիռ կողմեր նախընտրելի են համարել հստակ գործառույթներով և պարտականություններով ֆորմալ հիմունքներով գործող բազմաշահառու ֆորումի (ԲՇՖ) ստեղծումը՝ հաշվետվողականությունն ամրապնդելու, ներգրավվածության հետևողականությունն ապահովելու և թե՛ Կառավարության, թե՛ քաղաքացիական հասարակության մասնակիցների շրջանում գործընթացի նկատմամբ պատասխանատվության ավելի ուժեղ զգացում ձևավորելու համար:[14] Նման հարթակի ստեղծման համար պարտադիր չէ Վարչապետի որոշման ընդունումը, սակայն առնվազն օգտակար կլիներ անդամների կազմի և ԲՇՖ-ի դերի մասին հանրամատչելի տեղեկությունների առկայությունը: Բացի դրանից, ԲՇՖ-ն կանոնավոր նիստեր չի անցկացրել, ինչպես պահանջվում է նվազագույն չափանիշներով: Քաղաքացիական հասարակության շահագրգիռ կողմերը նշել են, որ կանոնավոր նիստերից բացի՝ կոնկրետ հանձնառություններին, քաղաքականության ոլորտներին, թվային հարթակներին կամ բաց կառավարման թեմաներին նվիրված քննարկումների կազմակերպումը կարող է բարձրացնել երկխոսության որակը և Կառավարության ու ՔՀԿ դերակատարների միջև արդյունավետ համագործակցության ավելի լայն հնարավորություններ ստեղծել:[15]

Ավելին, Կառավարության՝ ԲԿԳ-ի պաշտոնական կայքը չի թարմացվել և չի ներառվել Գործողությունների նոր ծրագիրը: Թեև ԲԿԳ Հայաստան նախաձեռնության պաշտոնական ֆեյսբուքյան էջը պարբերաբար թարմացվում է, և այնտեղ հրապարակվում են բաց կառավարման հարցերի վերաբերյալ նորություններ ու տեղեկություններ, այնուամենայնիվ արդիական պաշտոնական կայքի առկայությունը շարունակում է կարևոր մնալ՝ հանրության համար մատչելի և հեշտ որոնելի տեղեկություններ ապահովելու նպատակով:

Քանի որ Կառավարությունը որոշել էր նախորդ Գործողությունների ծրագրի հանձնառությունները ներառել նոր ծրագրում, իրազեկման ու խորհրդակցությունների միջոցառումները եղել են սահմանափակ, իսկ հանձնառությունները հիմնականում ձևավորվել են պատասխանատու պետական մարմինների կողմից: Միևնույն ժամանակ

Open Government Partnership
Independent Reporting Mechanism

Վարչապետի աշխատակազմը տրամադրել էր նախապես սահմանված առաջնահերթությունների վերաբերյալ կարծիքներ և առաջարկություններ ներկայացնելու հարթակ, ինչը դրական քայլ էր: Այնուամենայնիվ համատեղ մշակման գործընթացի թափանցիկությունը բարձրացնելու համար կարևոր է, որ բոլոր առաջարկները փաստաթղթավորվեն, իսկ դրանց հեղինակներին տրամադրվի անհատական արձագանք, ինչպես նաև հիմնավորում, թե ինչու առաջարկությունները չեն ընդունվում:

Հետագա Գործողությունների ծրագրերի գործընթացների համար ԱՀՄ-ն Վարչապետի աշխատակազմին առաջարկում է.

- Հրապարակել համատեղ մշակման և կատարման գործընթացներին շահագրգիռ կողմերի մասնակցության հստակ ու հասանելի կանոնները, այդ թվում՝ Հայաստանի Աշխատանքային խմբի լիազորությունները, կազմը և կառուցվածքը:
- Ապահովել բազմաշահառու ֆորումի կանոնավոր նիստերի անցկացումը՝ առնվազն վեց ամիսը մեկ անգամ՝ ԲԿԳ նվազագույն պահանջներին համապատասխան:
- Թարմացնել և շարունակաբար վարել Կառավարության՝ ԲԿԳ-ի պաշտոնական կայքը՝ առնվազն հրապարակելով գործող Գործողությունների ծրագիրը և մասնակցության կանոնները, ինչպես նաև առնվազն տարին երկու անգամ ներկայացնելով իրականացման առաջընթացի վերաբերյալ տեղեկություններ: Այդ նպատակով կարող է օգտագործվել նաև պետական մարմինների այլ կայքերի կառուցվածքում առանձնացված նպատակային էջ:
- Հրապարակել ներկայացված բոլոր առաջարկությունները և դրանց հեղինակներին տրամադրել անհատականացված պատասխաններ, այդ թվում՝ հիմնավորում, թե ինչու առաջարկությունները չեն ներառվել:

[1]«ԲԿԳ մասնակցության և համատեղ մշակման չափանիշներ», Բաց կառավարման գործընկերություն, 24 նոյեմբերի 2021թ., www.opengovpartnership.org/ogp-participation-co-creation-standards:
[2]«Նվազագույն պահանջների գնահատման ԱՀՄ ուղեցույց», Բաց կառավարման գործընկերություն, 31 մայիսի 2022թ., www.opengovpartnership.org/documents/irm-guidelines-for-the-assessment-of-minimum-requirements:
[3]Խմբագրական նշում. Երկամյա Գործողությունների ծրագրերի դեպքում ԱՀՄ-ն կատարման ընթացքում կիրառելի նվազագույն պահանջների պահպանումը կգնահատի արդյունքների վերաբերյալ զեկույցում: Քառամյա Գործողությունների ծրագրերի դեպքում ԱՀՄ-ն դրանց պահպանումը կգնահատի Միջանկյալ գնահատման շրջանակում: Գործողությունների բոլոր ծրագրերի դեպքում ԱՀՄ-ն Արդյունքների վերաբերյալ զեկույցում կներկայացնի Գործողությունների ծրագրի ամբողջ շրջափուլի ընթացքում մասնակցության և համատեղ մշակման գործելակերպերի համապարփակ վերլուծություն: Տե՛ս, «ԲԿԳ ազգային ձեռնարկ. կանոններ և ուղեցույց մասնակիցների համար (2024թ.)», Բաց կառավարման գործընկերություն, 11 ապրիլի 2024թ., www.opengovpartnership.org/documents/ogp-national-handbook-rules-and-guidance-for-participants-2024:
[4]Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան, «Հայաստանի թվային բարեփոխումը: Հունիսի 2-ին պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների ավելի քան 40 ներկայացուցիչ քննարկել են Հայաստանի թվային բարեփոխումների օրակարգը», Ֆեյսբուք, 5 հունիսի 2025թ., https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0qdXSbkY354M4bWw1Y5P7aWaCrfYxVHZ2GDmpghtmwK9W7YkaBda8XmF5Uq1cLfGml:
[5]«Միանալ խմբին», Բաց կառավարման գործընկերություն Հայաստան, https://ogp.gov.am/en/joining-the-group: Վերջին անգամ մուտքը՝ 31 մարտի 2026թ.:
[6]Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան, https://ogp.gov.am/en: Վերջին անգամ մուտքը՝ 31 մարտի 2026թ.:
[7]«Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան», Ֆեյսբուք, https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/:
[8]Տե՛ս՝ https://www.facebook.com/OpenGovernmentPartnership/posts/-armenia-launches-its-new-ogp-action-plan-for-20252027the-government-has-committ/1364213545740665/:
[9]https://www.gov.am/am/announcements/item/1594/, Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան, ««Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության նոր գործողությունների ծրագրի մեկնարկ», Ֆեյսբուք, 2 ապրիլի 2025թ.,

https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0nssUpL73nQzdSQdjZ47vhPHKLQ9ubsQgj15cGDHBRjfoCtvyoj3wW6ESbuy5SnEvl:

[10]Կառավարությունը և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ը «Բաց կառավարման շաբաթ» միջոցառման ընթացքում կազմակերպել են համատեղ միջոցառում.
Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան,
«Հարգելի՛ գործընկերներ, մայիսի 20-ին «Բաց կառավարման շաբաթ»-ի շրջանակում վարչապետի աշխատակազմը և «IFES Հայաստան» կազմակերպությունը նախատեսել են «Թվային ժողովրդավարություն և թափանցիկ կառավարում» խորագրով միջոցառում», Ֆեյսբուք, 16 մայիսի 2025թ.,
https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0tqrA79Ty29L2FzDSeemYzU6SqsWUAZK6p9Ujn5kw86pHfdusuuY5UY18ur2uCyjnl, Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան, «Մայիսի 20-ին Բաց կառավարման գործընկերություն (ԲԿԳ)-Հայաստանը և ԱՅ ԷՖ Ի ԷՍ-ը կազմակերպել են պանելային քննարկում՝ նվիրված թվային գործիքների դերակատարությանը՝ որպես թափանցիկության և հաշվետվողականության խթանիչ Հայաստանում», Ֆեյսբուք, 21 մայիսի 2025թ.,
https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid09J9TRHMGTKNzxdYLbXvhGAommz5HKkZt5Faguxkxi7qH1qnLVtqxXhNfsMu58wR4l:

[11]https://www.gov.am/am/announcements/item/1594/ (վերջին անգամ մուտքը՝ 31 մարտի 2026թ.), Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան, Նոր գործողությունների ծրագրի մեկնարկը»,
https://www.facebook.com/OpenGovernmentPartnershipArmenia/posts/pfbid0nssUpL73nQzdSQdjZ47vhPHKLQ9ubsQgj15cGDHBRjfoCtvyoj3wW6ESbuy5SnEvl:

[12]««Բաց կառավարման գործընկերություն-Հայաստան» նախաձեռնության շրջանակում Հայաստանի Հանրապետության 2025–2027 թվականների գործողությունների ծրագիրը», Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, մուտքը՝ 23 սեպտեմբերի 2026թ., https://www.e-draft.am/projects/9336:

[13]Լիլյա Աֆրիկյան (Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 4 մարտի 2026թ.:

[14]Արփինե Հակոբյան («ՀԿ կենտրոն»), հարցազրույց ԱՀՄ-ի հետ, 24 մարտի 2026թ., Լիանա Դոյդոյան (Հայաստանի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 20 մարտի 2026թ., Նաիրա Առաքելյան («Արմավիրի զարգացման կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 23 մարտի 2026թ.:

[15]Սոնա Այվազյան («Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 5 փետրվարի 2026թ., Գրիշա Խաչատրյան («Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն»), ԱՀՄ-ի կողմից անցկացված հարցազրույց, 8 ապրիլի 2026թ.: